Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 31 (2041) ՇԱԲԱԹ, ՕԳՈՍՏՈՍ 26, 2023
VOLUME 43, NO. 31 (2041) SATURDAY AUGUST 26, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Լաւրովեան Առաջին Ծրագրի Շարունակութիւնը

Անցնող մօտ 30 տարիներու ընթացքին Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման նպատակով կազմուեցան բազմաթիւ ծրագիրներ: Անոնցմէ գլխաւորներն էին փաթեթային լուծման ծրագիրը, փուլայինը, ընդհանուր պետութեան ծրագիրը, Քի Ուեսթեան բանակցութիւնները, Մատրիտեան սկզբունքները եւ վերջապէս 2015 թուականի Լաւրովեան ծրագիրը, որ կը նախատեսէր Լեռնային Ղարաբաղին յարող 5 շրջաններու վերադարձը Ատրպէյճանին եւ ապա՝ մնացեալ 2 շրջանները: Այս ծրագրով Հայաստանը Արցախին կապող միջանցք մը կը հաստատուէր, որ պիտի հսկուէր Ռուս խաղաղապահներու կողմէ: Նոյն ծրագրով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կը մնար անորոշ:

44-օրեայ պատերազմին արդիւնքով Լաւրովեան առաջարկները փաստօրէն դարձան իրականութիւն մէկ կարեւոր տարբերութեամբ որ, Ռուս խաղաղապահները չկարողացան ապահովել միջանցքի անխափան գործունէութիւնը եւ այսօր Արցախի ժողովուրդը 9 ամսուայ շրջափակումէն ետք, կանգնած է սովամահ դառնալու վտանգին առջեւ:

Ըստ երեւոյթին Լաւրով այժմ Հայաստանին ու Ատրպէյճանին ներկայացուցած է իր առաջին ծրագրին մէջ առկախ մնացած հարցին՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերող առաջարկները: Արցախի նախագահին կից Հակաճգնաժամային Խորհուրդի նախագահ Տիգրան Պետրոսեանը իր ֆէյսպուքեան էջով հրապարակեց փաստաթուղթի մը նախագիծ՝ զայն ներկայացնելով որպէս Արցախի հարցով Լաւրովի առաջարկ: Փաստաթուղթը վերնագրուած է՝ «Ատրպէյճանական ԽՍՀ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տարածքին հայ բնակչութեան անվտանգութեան եւ իրաւունքներու ապահովման հիմնական սկզբունքներն ու չափորոշիչները՝ Ատրպէյճանի օրէնսդրութեան համապատասխան»: Պետրոսեանի համաձայն, Սերկէյ Լաւրով այս իր նոր փաստաթուղթը ներկայացուցած է Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներուն՝ Յուլիսին Մոսկուայի մէջ կայացած հանդիպման ժամանակ: Առ այժմ, կողմերէն ոչ մէկը հրապարակային կարծիք չէ յայտնած այս փաստաթուղթի կապակցութեամբ, սակայն այն որ, փաստաթուղթը կը

Շար.ը էջ 6

ՄԱԿ-ի Մէջ Ճշմարտութիւնը Բարձրաձայնուեցաւ եւ Հնչեց Հաւաքական Կոչ՝ Վերացնելու Լաչինի Միջանցքին Արգելափակումը. Փաշինեան

ՀՀ կառավարութեան հերթական նիստ ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի նիստին՝ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ հաստատուած մարդասիրական ճգնաժամին վերաբերեալ:

«ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդում տեղի ունեցաւ հրատապ քննարկում Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում հաստատուած մարդասիրական ճգնաժամի վերաբերեալ: Եթէ ամփոփելու լինենք քննարկումը կարող ենք արձանագրել հետեւեալը», ըսաւ Վարչապետը ու աւելցուց. «Առաջին՝ միջազգային բարձրագոյն ատեանում ընդգծուեց Լաչինի միջանցքի փակ լինելը: Ի հարկէ, Հայաստանի հանրութեանը կարող է տարօրինակ թուալ, որ սա արձանագրում եմ որպէս Անվտանգութեան Խորհրդում տեղի ունեցած քննարկման արդիւնք, բայց չպէտք է մոռանալ, որ Ատրպէյճանն անընդհատ ու շարունակաբար պնդում է, թէ Լաչինի միջանցքը փակ չէ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Կառավարութեան նիստի ընթացքին

«Երկրորդ՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդում տեղի ունեցած քննարկումը հաստատեց Լեռնային Ղարաբաղում մարդասիրական ճգնաժամի առկայութիւնը եւ այն, որ Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակչութեան կեանքն ու անվտանգութիւնը դրուած են կասկածի տակ:

«Երրորդ՝ ընդգծուեց, որ Արդարադատութեան Միջազգային

Շար.ը էջ 6

Չեմ Կարծեր, Որ ԱՄՆ Պիտի Ուզէր Նպաստել Ցեղային Զտումներու Քաղաքականութեան. Արարատ Միրզոյեան

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան Պելճիքայի արտաքին գործերու նախարար Հաճա Լահպիպի հետ հանդիպումէն յետոյ կայացած մամուլի ասուլիսին ժամանակ արձագանգած է մամուլին մէջ տարածուած լուրերուն, թէ Ամերիկայի Միացեալ Նահանգները կը խոչընդոտէ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի հրատապ նիստին Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամի թեմայով քննարկման արդիւնքներով բանաձեւի ընդունման:

«Պէտք է ասեմ, որ Հայաստանի պահանջով հրաւիրուած ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի հրատապ նիստը հրապարակային էր, եւ ոչ միայն հայ ժողովուրդը, այլ նաեւ բոլորն աշխարհում հնարաւորութիւն ունէին լսել նիստի մասնակից երկրների դիրքորոշումները, այդ թւում՝ Միացեալ Նահանգների դիրքորոշումը: Այն իրավիճակում, երբ աշխարհը տեսնում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ Ատրպէյճանի կողմից իրականացուող ցեղային զտումների քաղաքականութիւնը, ես չեմ կարծում, թէ Միացեալ Նահանգները որեւէ կերպ պատրաստւում են կամ կը ցանկանան մաս կազմել ու նպաստել ցեղային զտումների քաղաքականութեանը: Դժուար պատկերացնելի կը լինի իմ համար: Ես կարծում եմ եւ յոյս ունեմ, որ

Արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

ԱՄՆ-ում շատ լաւ հասկանում են մարդասիրական ճգնաժամի չափերն ու ահագնացող կշռոյթները Լեռնային Ղարաբաղում եւ նաեւ գիտակցում են, որ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհրդի հնարաւոր բանաձեւը պիտի գայ հանգուցալուծելու այս իրավիճակը եւ կողմերին պիտի վերադարձնի բանակցութիւնների օրակարգին», ըսաւ Միրզոյեան՝ անդրադառնալով հարցումին, թէ ինչպէս պիտի մեկնաբանէ մամուլին մէջ տարածուած լուրերը, թէ Միացեալ Նահանգները կը խոչընդոտէ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի բանաձեւի ընդունման:

Ուաշինկթընն Կը Զգձգէ Ատրպէյճանին Ռազմական Աջակցութեան Տրամադրումը. Գոնկրէսական Փալոն

Գոնկրէսական Ֆրենք Փալոն

ԱՄՆ գոնկրէսական Ֆրենք Փալոն կը շարունակէ դէմ արտայայտուիլ Ուաշինկթընի կողմէ Պաքուին ռազմական աջակցութեան տրամադրման՝ հաշուի առնելով Արցախի հայութեան դէմ Ատրպէյճանի ոտնձգութիւնները: Այս մասին Փալոն գրած է X (նախապէս՝ Twitter) ընկերային ցանցով:

«Ես երկար ժամանակ դէմ

Շար.ը էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Ժամանակի Գործօնը Քաղաքականութեան Մէջ. Կամ Ինչպէս է Փոխւում Հռետորաբանութիւնը

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

«Եւրոնիւզ» հեռուստաընկերութիւնն օրերս հարցազրոյց էր արել Հայաստանի ու Ատրպէյճանի ղեկավարների հետ՝ նոյն հարցերն ուղղելով երկուսին էլ:

Եւ ահա, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը, խօսելով ԼՂ մասին, յայտարարել է. «Մարդիկ, որ ապրում են Ղարաբաղում, որը ժամանակաւորապէս վերահսկւում է ռուս խաղաղապահների կողմից, գտնւում են Ատրպէյճանում, եւ ստիպուած են ընտրութիւն կատարել. մնալ այստեղ ու ապրեն որպէս մեր քաղաքացիներ՝ էթնիկ փոքրամասնութեան կարգավիճակով (որոնցից մեր երկրում շատ կան), կամ էլ հեռանան»:

Բացի այդ, հայ հասարակութեանն ուղերձ յղելու հարցին ի պատասխան՝ նա նշել է. «Ղարաբաղի հայերը պէտք է հասկանան, որ լինելով Ատրպէյճանի հասարակութեան մաս, ստանալով անվտանգութեան երաշխիքներ, կրթական, մշակութային, կրօնական եւ մունիցիպալ իրաւունքներ՝ նրանք բնականն կեանք կ՚ունենան»:

Ալիեւի այս հարցազրոյցից յետոյ համացանցում հանդիպեցինք նրա՝ կրկին «Եւրոնիուզին» տուած մէկ այլ հարցազրոյցի, այս անգամ՝ 2011 թուականին (այն հրապարակուել էր 2011թ. Յունիսի 24-ին. մինչ այդ Կազանում կայացել էր եռակողմ հանդիպում, ընդունուել համատեղ յայտարարութիւն): Եւ ահա, 12 տարի առաջ տուած հարցազրոյցում Ալիեւի հռետորաբանութիւնը միանգամայն այլ էր: Խօսելով տարածքների վերադարձի դիմաց ԼՂ հայերին ինքնավարութիւն տալու մասին՝ Ալիեւն ասում էր, թէ ինքը մէկ անգամ չէ, որ յայտարարել է՝ իրենք պատրաստ են ԼՂ-ում ապրողներին ու վերադարձողներին երաշխաւորել ամենալայն ինքնավարութիւնը, որ հնարաւոր է աշխարհում: Իսկ թէ ինչ ինքնավարութեան մասին է խօսքը, Ալիեւը մանրամասնել էր, թէ դա բանակցութիւնների թեմա է. «Մենք կարծում ենք, որ դա կը լինի լայն ինքնավարութիւն: Եւրոպայում եղած ինքնավարութիւնների օրինակը կարող է օգնել մեզ»:

«Փոխզիջման էութիւնից բացի կարեւոր է նաեւ փոխզիջման պահը: Ակնյայտ է, որ փոխզիջման դէպքում հասանելի առաւելագոյնը ձեռքբերելու հնարաւորութիւն ունի ուժեղ կողմը»

Լեւոն Տէր-Պետրոսեան

Փաստօրէն, ընդամէնը 12 տարի առաջ Ատրպէյճանը գոնէ հրապարակաւ պատրաստ էր ԼՂ-ին տալ ամենալայն ինքնավարութիւնը, այնինչ այսօր որեւէ խօսք չկայ որեւէ կարգավիճակի մասին: Դեռ աւելին, հնչում է պնդում, թէ չցանկացողները կարող են լքել տարածքը:

Ալիեւի հռետորաբանութեան այս փոփոխութիւնն, իհարկէ, հասկանալի է, եթէ հաշուի առնենք 2020-ի պատերազմի արդիւնքները: 44-օրեայ պատերազմի պարտութիւնից յետոյ, այն էլ հիմա՝ աշխարհաքաղաքական իրադարձութիւնների այս յորձանուտում, այլ բան հնարաւոր չէ ակնկալել: Մինչդեռ, ընդամէնը մի քանի տարի առաջ Ատրպէյճանը պատրաստ էր գնալ որոշակի զիջումների, քանի դեռ հնարաւոր էր փոխզիջման գնալ: Իսկ աւելի ուշ արդէն Ատրպէյճանը համաձայն չէր նաեւ դրանց՝ վստահ լինելով, որ խնդիրը կարող է լուծել ռազմական գործողութիւնների միջոցով, որից յետոյ արդէն փակել ԼՂ հարցը: Ի դէպ, 2011թ. հարցազրոյցում նա մատնանշում է, թէ իրենց ռազմական պիւտճէն գերազանցում է Հայաստանի ողջ պետական պիւտճէն:

Այս ամէնը, սակայն, յիշեցինք բոլորովին այլ համատեքստում: Քաղաքականութեան մէջ շատ կարեւոր է ժամանակի գործօնը. այն, ինչ հնարաւոր է այսօր, միգուցէ հնարաւոր չլինի հենց վաղը: Այս առումով լաւագոյն ձեւակերպումը Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի «Պատերա՞զմ, թէ՞ Խաղաղութիւն. լրջանալու պահը» յօդուածն է, որում ասուած է. «Փոխզիջման էութիւնից բացի կարեւոր է նաեւ փոխզիջման պահը: Ակնյայտ է, որ փոխզիջման դէպքում հասանելի առաւելագոյնը ձեռքբերելու հնարաւորութիւն ունի ուժեղ կողմը: Հայաստանն ու Ղարաբաղն այսօր ուժեղ են, քան երբեւէ, բայց հակամարտութեան չկարգաւորման դէպքում, մէկ-երկու տարի յետոյ, անհամեմատ թուլանալու են: Այն, ինչ մերժում ենք այսօր, ապագայում խնդրելու, բայց չենք ստանալու, ինչպէս բազմիցս եղել է մեր պատմութեան մէջ»:

Արդէն 2021թ., Հանրային հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում, Տէր-Պետրոսեանը մեկնաբանում էր. «Մենք պարտուեցինք՝ չկարողանալով հասկանալ ժամանակի ընթացքը: Ժամանակը կարեւորագոյն ֆակտոր է քաղաքականութեան մէջ: Մի բան, որ կարող էինք անել որեւէ պահի, ոչ մի երաշխիք չկայ, որ յաջորդ պահին դա կարող ենք անել: Դա մենք չզգացինք, մեր իշխանութիւնները չզգացին այդ պահը»:

ԼՂ խնդրում ստեղծուած իրավիճակը, Ատրպէյճանի փոփոխուած հռետորաբանութիւնն այս պնդման լաւագոյն ապացոյցն են, դասագրքային փայլուն օրինակ, երբ մերժելով հնարաւորն ու ձգտելով առաւելագոյնի՝ շատ արագ կորցնում ես ամբողջը: Աւելի լաւ օրինակ, թերեւս, դժուար է գտնել: Բայց հենց սա է, որ հայ հասարակական-քաղաքական միտքն առ այսօր չի հասցրել ըմբռնել ինչպէս 1920 թուականին, այնպէս էլ 100 տարի անց՝ այսօր:

Ու դրա համար է, որ արկածախնդրութիւնը յաղթել է իրատեսութեանը:

«ՌԱՏԱՐ»

Երեւանի Ընտրութեան Սիւնիքեան Մեկնարկն Ու Ինտրիգը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Նիկոլ Փաշինեանի Սիւնիք կատարած այցը թերեւս հնարաւոր է բնորոշել նախընտրական, իհարկէ այդ ձեւակերպման այն իմաստով, որ այցը փաստօրէն նախորդեց Երեւանի Աւագանու, այսինքն քաղաքապետի ընտրութեան մեկնարկին: Իսկ այդ ընտրութիւնն իհարկէ լինելով համայնքային, անշուշտ ունի քաղաքական էական նշանակութիւն, յատկապէս քաղաքական իշխանութեան համար: Ընտրութեան ձախողումը լրջօրէն կը սասանի իշխանութեան քաղաքական դիրքերը: Միաժամանակ, կայ ոչ միայն պարզապէս չպարտուելու խնդիր, այլ՝ ցանկալի արդիւնքի հասնելու, որովհետեւ ցանկալի արդիւնքը նուազագոյնը 40 տոկոսն է՝ Աւագանու մեծամասնութիւն կազմելու համար, քանի որ այդքան ստացող ուժին տրւում է նաեւ 10 տոկոս բոնուս, համաձայն այն ընտրական մաթեմատիկայի, որ ներդրուել է դեռեւս ՀՀԿ-ական իշխանութեան շրջանում ընդունուած օրէնսդրութեամբ: Կառավարող մեծամասնութեան համար ներկայումս դա բարդ խնդիր է, եթէ հաշուի առնենք, որ գրեթէ բոլոր սոցհարցումների տուեալով՝ ընդ որում տարբեր «դիրքերում» գտնուող ընկերութիւնների իրականացրած, գործող իշխանութեան վարկանիշը հաւասար է միջինը 15-20 տոկոսի:

Իհարկէ իշխանութեան համար «փրկօղակ» է այն, որ ըստ էութեան չկայ մրցունակ վարկանիշ ունեցող ընդդիմադիր ուժ, գոնէ առայժմ, դարձեալ՝ համաձայն այդ հարցումների, սակայն դա փոքր «մխիթարութիւն» է, քանի որ կայ մեծ ցուցանիշ արձանագրելու խնդիր: Զուտ համայնքային օրակարգով լուծել այդ խնդիրը՝ հազիւ թէ ստացուի: Պէտք է ապահովել թէժ ինտրիգ, նաեւ սեփական կողմնակիցներին առաւելագոյնս մոբիլիզացնելու համար, որպէսզի հնարաւորինս քիչ լինի «նախկին» մեթոդներով քուէ կամ պատկեր ստանալու անհրաժեշտութիւնը: Իսկ թէժ ինտրիգ ապահովելու համար թերեւս հարկ է լինելու ընտրարշաւին աշխուժօրէն ներգրաւել Նիկոլ Փաշինեանին եւ դարձեալ փորձել ստանալ «սեւսպիտակ» տրամաբանութեամբ մի մթնոլորտ, որը շարունակում է լինել քաղաքական ներկայիս իշխանութեան ըստ էութեան միակ «տարերքը»: Դրան կը նպաստի նաեւ այն, որ կայ յանուն Արցախի փրկութեան իշխանափոխութեան գաղափարի վրայ խաղադրոյք կատարող ընդդիմութիւն, ինչը Նիկոլ Փաշինեանին կ՚օգնի ծաւալել խաղը:

Սիւնիք այցը նախընտրական շրջանի շէմին կազմակերպելը անշուշտ ներառուած էր այդ հաշուարկներում, մասնաւորապէս ցոյց տալու համար, որ իշխանութիւնը հոգ է տանում ռազմավարական նշանակութեան ռեգիոնի համար: Իհարկէ, դա կապ չունի Երեւանի հետ, բայց, ինչպէս նշեցի, քաղաքապետի ընտրութեան քարոզարշաւը թերեւս միայն ֆորմալ իմաստով է կապ ունենալու Երեւանի հետ, իսկ ոչ ֆորմալ, դէ ֆակտօ առումով Երեւանի թեմատիկայի հետ կապը կը լինի թերեւս նուազագոյն: Դրանից բացի, հաշուարկը անշուշտ ներառում է ոչ միայն ուղիղ ազդեցութեան հանգամանքը, այլ նաեւ ընդհանուր իմիջային բարելաւմանը միտուած խնդիրը, անուղղակի երեւանեան էֆֆեկտի ակնկալիքով: Հետաքրքիր է իհարկէ՝ Կապանի օդանավակայանում Նիկոլ Փաշինեանի վայրէջքից ժամեր անց գիշերային ատրպէյճանական կրակոցները օդանավակայանի ուղղութեամբ եւ օդանավակայանի շուրջ ձեւաւորուած ինտրիգը հաշուարկուա՞ծ էր, որպէս հնարաւոր, թէ՞ հաշուարկից դուրս:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր տեսակէտները

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Առաջին Անգամ Կայացած Են Երեւան-Կապան Օդանաւով Կանոնաւոր Թռիչքները

Երեւան-Կապան թռիչքով վարչապետ Փաշինեան կը ժամանէ Սիւնիքի մարզ

Առաջին անգամ, ըստ հաստատուած ցուցակի, կայացած են Երեւան-Կապան, Կապան-Երեւան օդանաւով թռիչքները: Սահմանուած ժամանակին «Զուարթնոց» օդակայանէն մեկնած ինքնթիռը վայրէջք կատարած է Կապանի «Սիւնիք» օդակայանին մէջ եւ ըստ ժամանակացոյցի Կապանէն մեկնած է Երեւան:

Կապան-Երեւան թռիչքի օդանաւի ուղեւորներուն մէջ էին նաեւ Սիւնիքի մարզպետի տեղակալն ու խորհրդականը: Այս մասին յայտնած են Սիւնիքի մարզպետարանէն:

Կանոնաւոր թռիչքները սկսել մի քանի օր առաջ Վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած էր Սիւնիքի մարզ՝ Երեւան-Կապան թռիչքով:

«Սիւնիք» օդակայանին մէջ վարչապետին դիմաւորած են Սիւնիքի մարզպետ Ռոպերթ Ղուկասեանը, Կապանի քաղաքապետ Գէորգ Փարսեանը եւ պաշտօնատար այլ անձեր:

Նիկոլ Փաշինեանը շրջած է օդակայանին մէջ եւ ծանօթացած է ստեղծուած պայմաններուն:

Ռուս Խաղաղապահներու Միջնորդութեամբ 41 Քաղաքացիներ Տեղափոխուած Են Հայաստան

Ռուս խաղաղապահներու կողմէ Օգոստոս 21-ին տեղի ունեցած է Ռուսիոյ եւ Արցախի 41 քաղաքացիներու տեղափոխութիւն Արցախէն Հայաստան: Այս մասին Արցախի Հանրապետութեան կառավարութեան ռուսական խաղաղապահ զօրախումբին հետ համագործակցութեան ապահովման կեդրոնը հաղորդագրութիւն տարածած է, որուն մէջ կը շեշտուի, որ սա առաջին դէպքն է Յունիս 14-էն ի վեր:

«ՌԴ քաղաքացիները վաղուց կը սպասէին իրենց տեղափոխութեան, իսկ Արցախի քաղաքացիները ուսանողներ են, որոնք ընդունուած են ՀՀ եւ արտասահմանեան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ: Ըստ խաղաղապահներուն հետ ձեռքբերուած նախնական պայմանաւորուածութեան՝ յառաջիկայ օրերուն պիտի շարունակուի ուսանողներու եւ ռուս քաղաքացիներու տեղափոխութիւնը:

Այնուամենայնիւ, ատրպէյճանական կողմը կը շարունակէ խոչընդոտել բազմաթիւ անձերու երկկողմանի տեղաշարժը: Այս պահի դրութեամբ, հարիւրաւոր քաղաքացիներ Հայաստանի մէջ կը սպասեն Արցախ վերադարձին, շտապ եւ ծրագրաւորուած առողջական հիմքերով 333 անձ հերթագրուած է Կարմիր Խաչին միջոցով Հայաստան տեղափոխուելու համար՝ չհաշուած մարդասիրական, աշխատանքային եւ այլ նպատակներով երկկողմանի տեղաշարժի անհրաժեշտութիւնը հազարաւոր անձերու մօտ:

Ատրպէյճանական կողմը կը շարունակէ նուաստացուցիչ պայմաններ ստեղծել Հաքարիի կամուրջին մօտ տեղակայուած ապօրինի անցակէտին՝ ի լրումն Արցախի քաղաքացիներու նկատմամբ անօրինական հսկողութեան ու խոչընդոտներու: Մասնաւորապէս, անձերու կամքին հակառակ՝ ատրպէյճանցիները եւ իրենց հրաւիրած լրագրողները հերթական անգամ նկարահանած են անոնց դէմքերը եւ օգտագործած են քարոզչական նպատակներով: Բացի անկէ, ատրպէյճանական կողմը թոյլ չէ տուած Ռուսիոյ խաղաղապահ զօրակազմի ինքնաշարժները անցնին Հաքարիի կամուրջը՝ ստիպելով ուղեւորներուն իրենց բեռներով հանդերձ ոտքով անցնիլ կամուրջը, որմէ յետոյ Գորիսէն ընդառաջ եկած ինքնաշարժներով շարունակած են ճանապարհը (ապացոյցը՝ կից տեսանիւթով)», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Հաղորդագրութեան մէջ նաեւ կը յիշեցուի, որ Յունիս 15-էն առ այսօր Ատրպէյճանը կը շարունակէ արգիլել Հայաստանէն Արցախ բոլոր մարդասիրական բեռներուն տեղաշարժը, ինչի հետեւանքով օրէ օր կը խորանայ մարդասիրական աղէտը Արցախի մէջ: ՀՀ Սիւնիքի մարզի Կոռնիձոր համայնքին մէջ՝ Լաչինի միջանցքի մուտքին մօտ, Յուլիս 26-էն կը շարունակէ կասեցուած մնալ Արցախի համար ՀՀ կառավարութեան կողմէ ուղարկուած շուրջ 400 թոն մարդասիրական աջակցութիւնը:

«Ատրպէյճանական ապօրինի անցակէտով քաղաքացիներու անցումը որեւէ կերպ չի փոխեր Արցախի Հանրապետութեան կառավարութեան դիրքորոշումը», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Արցախի Ժողովուրդի Մօտ Նախագահի Հրաժարականի Պահանջ Չկայ. Պատգամաւոր

Մինչ իշխանութիւնները անարձագանգ կը թողեն Արցախի նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեանի պնդումները, թէ նախագահ Արայիկ Յարութիւնեանը հրաժարականի խոստում տուած է, խորհրդարանի մեծութեամբ երկրորդ ուժէն այդ կ՚որակեն մտացածին:

«Միասնական Հայրենիք» խմբակցութեան ղեկավար Մարսէլ Պետրոսեանը համոզուած է, որ Արցախի ժողովուրդի շրջանակին մէջ նման պահանջ այս պահին չկայ:

«Արհեստածին մտահղացում է, որը ներմուծուում է հանրութեան մէջ այն շրջագայելու հնարաւորութիւն ստեղծելու նպատակով, որը, կարելի է ասել, ես աւելի քան համոզուած եմ դրանում, շարունակութիւն ոչ միայն չի ունենալու, այլեւ դա հնարաւոր չէ», «Ազատութեան» հետ զրոյցին ըսաւ ան:

Մինչեւ Վարդանեանի յայտարարութիւնը Արցախի իշխող ուժէն «Ազատութեան» հերքած էին շրջանառուող լուրերը, թէ Յարութիւնեան կը պատրաստուի հրաժարական տալու, աւելին՝ ըսած էին, որ անցեալ Հինգշաբթի օր նախագահն իր խումբի անդամներուն հետ վերահաստատած է չհեռանալու որոշումը:

Ռուբէն Վարդանեանը տեսաուղերձով մեղադրած էր Յարութիւնեանը, թէ իբր նա շաբաթասկիզբին խոստացած է հրաժական ներկայացնել, բայց յետոյ ետ կանգնած է խոստումէն:

«Շաբաթուայ սկզբում Դուք ասում էիք, որ հրաժարական էք տալու, ու Ձեզ պէտք չի համոզել, որովհետեւ որոշումն արդէն կայացրել էք, ու դա առաջին անգամ չէ: 8 հոգուց, որ ներկայ էին այդ հանդիպմանը, մի մասն արդէն չէր հաւատում ձեր խօսքին: Մի մասն էլ ասում էր՝ գուցէ այս անգամ իսկապէս ինքն ճիշ՞դ է ասում, եւ ցաւալի է, որ առաջին մարդու խօսքը արդէն չունի հաւատ», ըսած էր ան:

Վարդանեանը, սակայն, չէր յստակացուցած, թէ ինչ հանդիպման մասին է խօսքը, ինչու Յարութիւնեանը նման խոստում տուած է: Ընդդիմադիր խմբակցութեան ղեկավարը անհնար կը համարէ ընդհանրապէս այս իրավիճակին մէջ նախագահին հրաժարականը:

«Արայիկ Յարութիւնեանի հրաժարականից յետոյ ո՞վ պէտք է լինի նախագահը, եւ ո՞ւմ էք ցանկանում տեսնել», նշեց Մարսէլ Պետրոսեանը:

Ռուբէն Վարդանեանի պնդմամբ՝ Արայիկ Յարութիւնեանը ըսած է, թէ գինք կը ճնշեն, որ չհեռանայ, խօսած է Ազգային Ժողով մտած աշխարհազօրէն:

Ռուբէն Վարդանեանը Պիտի Աջակցի «Ապրելու Երկիր» Կուսակցութեան

Արցախի նախկին պետական նախարար, մեծահարուստ Ռուբէն Վարդանեանը յայտնած է, որ Երեւանի ընտրութիւններուն պիտի աջակցի «Ապրելու Երկիր» կուսակցութեան:

Նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեան

«Այո՛, ես ճանաչում եմ Մեսրոպ Առաքելեանին եւ Մանէ Թանդիլեանին: Ե՛ւ Արցախում, ե՛ւ Հայաստանում այս երկու տարուայ մէջ ճանապարհ ենք անցել տարբեր իրավիճակներում, իրենք ունեն սկզբունքներ, ես իրենց վստահում եմ, աջակցելու եմ իրենց գործունէութեանը, կուսակցութեանը, որն ունի գաղափար, տեսլական:

Ամէն ձեւով աջակցելու եմ «Ապրելու Երկիր» կուսակցութեանը», ըսած է Ռուբէն Վարդանեանը:

Շատերու մօտ կայ այն կարծիքը, որ Ապրելու Երկիր» կուսակցութիւնը հիմնուած է Ռուբէն Վարդանեանի կողմէ եւ ինք կը հանդիսանայ այդ կուսակցութեան իսկական ղեկավարը՝ Հայաստանի մէջ քաղաքական դաշտ մտնելու հեռանկարով:

Եկէք Միանանք Այս Օրակարգին՝ Փաշինեանի Հեռացում. Սեֆիլեան

Փաշինեանի հեռացում, ժամանակաւոր անցումային կառավարութեան ձեւաւորում, այս օրակարգին շուրջ պէտք է ըլլայ համախմբում, յայտարարեց Ազգային Ժողովրդավարական Բեւեռի Խորհուրդի անդամ Ժիրայր Սեֆիլեանը՝ Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ:

«Մենք այս վճռական փուլը սկսում ենք ի սկզբանէ յայտարարելով՝ այս փուլն անպայման աւարտուելու է յաղթանակով, այդ պատճառով այս ընթացքում մեր կողմից տարաբնոյթ միջոցներ կարող է ձեռնարկուեն, որ վերջապէս այդ համախմբումը տեղի ունենայ եւ քայլերից մէկը այս է, բայց սահմանափակուած չենք միայն այս բնոյթի քայլերով: Մենք չենք ասում՝ եկէք միացէք մեզ, մենք ասում ենք՝ եկէք միանանք այս օրակարգին՝ Փաշինեանի հեռացում եւ ժամանակաւոր անցումային կառավարութեան ձեւաւորում: Օգոստոսի 3-ից փորձում ենք մեր խօսոյթն այնպէս սրբագրել, այնպէս խմբագրել, որ բոլորի համար հասկանալի լինի, որ մեր թիրախը Փաշինեան Նիկոլ կոչուող պատուհասն է, որից պէտք է ձերբազատուենք», նշեց Սեֆիլեան:

Օգոստոս 24-ին ԱԺԲ-ն հանրահաւաք հրաւիրած է, որուն ընդառաջ Ժիրայր Սէֆիլեանը շուրջօրեայ ներկայ պիտի ըլլայ Ազատութեան հրապարակին վրայ:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Վարչապետը Ընդունած է Պելճիքայի Արտաքին Գործերու Նախարարին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կ'ընդունի Պելճիքայի արտաքին գործերու նախարար Հաճա Լահպիպին

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ու Պելճիքայի արտաքին գործերու նախարար Հաճա Լահպիպին այսօր կայացած հանդիպման ընթացքին անդրադարձած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական ճգնաժամի խորացման:

Վարչապետի աշխատակազմին փոխանցմամբ՝ Փաշինեան ընդգծած է, որ Ատրպէյճանի գործողութիւններուն նպատակն է ԼՂ-ի մէջ իրականացնել ցեղային զտում: Ան կարեւորած է ԼՂ-ոի մէջ ստեղծուած իրավիճակին վերաբերեալ ՄԱԿ Անվտանգութեան Խորհուրդին մէջ տեղի ունեցած հրատապ քննարկումները եւ Ատրպէյճանի քայլերուն նկատմամբ միջազգային գործընկերներու հասցեական արձագանգը: Վարչապետը շեշտած է գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտութիւնը՝ Ատրպէյճանի գործելաոճը փոխելու համար, ինչպէս նաեւ կարեւորած է Պրիւքսէլի մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տեղի ունեցած բանակցային գործընթացին մէջ մինչ այժմ ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու իրականացման հարցով հետեւողականութեան անհրաժեշտութիւնը:

Պելճիքայի արտաքին գործերու նախարարը ընդգծած է իր երկրին աջակցութիւնը Եւրոպական Միութեան դիրքորոշման, ըստ որուն՝ Ատրպէյճանը պէտք է ապահովէ Լաչինի միջանցքով մարդոց եւ բեռներու ազատ տեղաշարժը եւ իրականացնէ ՄԱԿ Արդարադատութեան Միջազգային Դատարանին կողմէ ընդունուած որոշումը:

Վարչապետ Փաշինեան կարեւորած է տիկին Լահպիպի այցը Հայաստան եւ ողջունած է Պելճիքայի կառավարութեան՝ Հայաստանի մէջ դեսպանութիւն բանալու որոշումը, ինչ որ պիտի նպաստէ ոչ միայն քաղաքական, այլ նաեւ տնտեսական ու մշակութային ոլորտներուն մէջ փոխգործակցութեան ընդլայնման:

Հաճա Լահպիպի խօսքով՝ իր այցին նպատակն է նոր լիցք հաղորդել հայ-պելճիքական յարաբերութիւններուն, այդ շարքին՝ տնտեսութեան ու ներդրումներու ոլորտին մէջ: Ան յաւելած է, որ պելճիքացի գործարարներու շրջանակին մէջ առկայ է Հայաստանի մէջ ներդրումային ծրագրեր իրականացնելու եւ առեւտրային կապերը խորացնելու մեծ հետաքրքրութիւն:

Միացեալ Նահանգները Յանձնառու է Աջակցելու Հայաստանի Ինքնիշխանութեան Ու Անվտանգութեան. ՀՀ-ի Մէջ ԱՄՆ Դեսպան

Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվին ընդգծած է, որ Միացեալ Նահանգները յանձնառու է աջակցելու Հայաստանի ինքնիշխանութեան ու անվտանգութեան: Ինչպէս կը յայտնէ Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանութիւնը, դեսպան Քվինը այս մասին ըսած է Վայոց Ձորի մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքին:

Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվին

«Դեսպան Քվինը Վայոց Ձորի մարզ կը գտնուէր՝ հանդիպելու տեղի պաշտօնատար անձերու հետ եւ դիտարկելու անվտանգային իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանին: Դեսպանը հանդիպեցաւ Վայոց Ձորի մարզպետին, ԵՄ դիտորդական առաքելութեան եւ տեղի զինուած ուժերու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումներուն ներկայ էր ԱՄՆ-ի մէջ ՀՀ դեսպան Լիլիթ Մակունցը: Դեսպան Քվին ընդգծեց, որ Միացեալ Նահանգները յանձնառու է աջակցելու Հայաստանի ինքնիշխանութեան ու անվտանգութեան, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի մէջ տեւական խաղաղութեան հաստատման», ըսուած է դեսպանութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

Ի՞նչ Փաստաթուղթ Կը Վերագրուի Լաւրովին

Յուլիս 25-ին Մոսկուայի մէջ կայացած էր Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարներու հերթական եռակողմ հանդիպումը: Ատրպէյճանի արտաքին գործերու նախարարին հետ երկկողմ հանդիպումէն յետոյ Լաւրով յայտնած էր, որ երկիրներու առաջնորդներու քննարկման համար շարք մը փաստաթուղթեր կը պատրաստուին: Անոնց բովանդակութեան մասին մանրամասնութիւններ, սակայն, չէր ներկայացուցած:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

Լաւրովին վերագրուող փաստաթուղթին մէջ կը նշուի, որ հայ բնակչութիւնը պէտք է հաւասար իրաւական պաշտպանութիւն ունենայ եւ խտրականութեան չենթարկուի ոչ լեզուի, ոչ ազգային, ոչ կրօնական հիմքով, պէտք չէ բռնի կամ ոչ-կամովին տեղահանուի.

Տեղական իշխանութեան մարմիններուն եւ զինուած կազմաւորումներուն մէջ մասնակցութեան պատրուակով հետապնդումներու, պատիժի օրէնսդրական արգելք՝ բացառութեամբ դատական կարգով պատերազմական յանցագործութիւններու կատարման մէջ մեղաւոր ճանչցուած անձերու», ըսուած է նախագիծին մէջ:

Առաջարկներուն մէջ ներառուած է նաեւ այն, որ հայ բնակչութիւնը պէտք է համամասնօրէն ներկայացուած ըլլայ Ատրպէյճանի օրէնսդիր, գործադիր ու դատական իշխանութեան հանրապետական եւ տեղական կառոյցներուն, այդ շարքին՝ Ատրպէյճանի դատախազութեան եւ ոստիկանութեան մէջ ու մասնակցի իրեն վերաբերող որոշումներու կայացման:

Խօսք կայ հայերու շարք մը իրաւունքներու երաշխաւորման մասին, մասնաւորապէս՝ կրօնական ազատութեան, մշակութային եւ ազգային ինքնութեան պահպանման, ուսումնական հաստատութիւններուն մէջ հայերէն կրթութիւն ստանալու, մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութեան:

Կ'ընդգծուի, որ պաշտօնական գրագրութեան ժամանակ, ինչպէս նաեւ «հայ բնակչութեան սեղմ բնակեցմամբ վայրերու մէջ» ճանապարհային նշաններու, ցուցանակներու եւ յայտարարութիւններու տեղադրումը պէտք է իրականացուի հայերէնով: Անդրադարձ կը կատարուի նաեւ Լեռնային Ղարաբաղ-Հայաստան փոխյարաբերութիւններուն.

«Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առանձին համաձայնագրի հիման վրայ ատրպէյճանական ԽՍՀ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի եւ Հայաստանի Հանրապետութեան հայ բնակչութեան միջեւ մշակութային, կրթական, գիտական, լրատուական, մարզական եւ այլ մարդասիրական սերտ շփումներու ապահովում: Դուրսէն հայ բնակչութեան տնտեսական եւ մարդասիրական օգնութեան անարգել ստացում:

Սպիտակ Տունը Կոչ Կ'ընէ Վերականգնելու Միջանցքով Անցումը. Ճոն Քիրպի

Սպիտակ Տունը կը շարունակէ ջանքերը՝ օգնելու համար Ատրպէյճանին եւ Հայաստանին դիւանագիտական ճանապարհով հասնելու խաղաղութեան: Այս մասին ԱՄՆ Պետական Քարտուղարութեան ճեպազրոյցի ժամանակ յայտնած է ԱՄՆ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի համակարգող Ճոն Քիրպին:

ԱՄՆ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի համակարգող Ճոն Քիրպի

«Մենք տարբեր մակարդակներով պահպանած ենք երկխօսութեան եւ դիւանագիտութեան որոշակի մակարդակ: Ազգային Անվտանգութեան Խորհուրդին կողմէ անով կը զբաղի ճէյք Սալիվանը, իսկ Պետական Քարտուղարութեան կողմէ՝ ճոն Ֆայնըրը», ըսած է Քիրպին:

«Մենք կանոնաւոր կերպով կ'աշխատինք դիւանագիտական ճանապարհով լաւագոյն արդիւնքի հասնելու համար», յաւելած է ան: Քիրպին նաեւ յայտնած է Ուաշինկթընի «խոր մտահոգութիւնը» Լաչինի միջանցքին վերաբերեալ: «Մենք կը փափաքինք, որ այս միջանցքը կրկին բաց ըլլայ, մենք Ատրպէյճանի կառավարութեան կոչ կ'ընենք անյապաղ վերականգնելու միջանցքով առեւտրային, մարդասիրական եւ մասնաւոր փոխադրամիջոցներու ազատ անցումը»:

Քիրպիի մեկնաբանութիւնները հնչած են այն ժամանակ, երբ երկկ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը հաւաքուած էր՝ քննարկելու համար Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակին արձագանգելու Հայաստանի խնդրանքը:

www.massispost.com

Հայաստանի Մէջ Առաջին Անգամ Ըլլալով «Ֆլայ Արնան» Ստացած է Համաշխարհային Ճանաչում

Հայաստանի ազգային օդային փոխադրութեան ուղիներ «Ֆլայ Արնա» ընկերութիւնը դարձած է IOSA ղեկավարող՝ ստանալով համաշխարհային ճանաչում ունեցող անվտանգութեան հաւատարմագիր:

«Ֆլայ Արնա»ն Հայաստանի մէջ առաջին եւ այս պահին միակ օդանաւային ընկերութիւնն է, որ յաջողութեամբ անցած է Օդային փոխադրութեան միջազգային ընկերակցութեան (IATA) գործառնական անվտանգութեան քննութիւնը (IOSA) եւ ստացած է IOSA վկայական:

Երկու տարի վաւերականութեամբ այս վկայականը տրամադրուած է IATA քննիչներու կողմէ տեղի ունեցած քննութեան արդիւնքներու հիման վրայ, որու ծիրին մէջ մանրակրկիտ ուսումնասիրուած եւ գնահատուած է օդանաւային ընկերութեան քաղաքականութեան, ընթացակարգերու եւ գործունէութեան համապատասխանութիւնը օդագնացութեան համաշխարհային չափանիշերուն:

Մասնաւորապէս՝ թռիչքային գործունէութեան, թռիչքային պիտանիութեան, որակի վերահսկման, օդագնացութեան անվտանգութեան, տեխնիկական սպասարկման, վերգետնեայ սպասարկման ծառայութիւններուն մէջ օգտագործուած ձեռնարկներու համապատասխանելիութիւնը IOSA պահանջներուն եւ անոնց գործնական կիրառումը առօրեայ թռիչքները իրականացնելու ժամանակ:

«Այսօր մեծ հպարտութեամբ ենք նշում, որ «Ֆլայ Արնա»ն ճանաչուել է Հայաստանի ամենանվտանգ ընկերութիւնը՝ յաջողութեամբ անցնելով օդագնացութեան ոլորտում ամենաբարդ IOSA քննութիւնը: Այս ձեռքբերումը վկայում է ամիսներ ձգուող խմբային աշխատանքի եւ աշխատանքում գերազանցութեան հասնելու մեր յանձնառութեան մասին: Մեր ուղեւորների եւ թռիչքային անձնակազմի անվտանգութիւնն ու բարեկեցութիւնն առանցքային է մեզ համար, եւ մենք շարունակելու ենք բարձր պահել օդագնացութեան ոլորտում ուղեւորների սպասարկման նշաձողը՝ հաւատարիմ մնալով ազգային օդային փոխադրութեան ուղիներ կոչմանը», նշած է «Ֆլայ Արնա»ի մամուլի խօսնակ Գայիանէ Անտոնեանը:

«Ֆլայ Արնա»ն պիտի շարունակէ բծախնդրօրէն հետեւիլ անվտանգութեան եւ սպասարկման ոլորտին մէջ համաշխարհային ամենաբարձր չափանիշերուն: Ընկերութիւնը իր հիմնադրման առաջին օրերէն ի վեր մեծ ջանքեր կը ներդնէ Հայաստանի մէջ օդագնացութեան ոլորտի զարգացման գործընթացին մէջ դրական ազդեցութիւն ունենալու համար:

Կարէն Դեմիրճեանի Արձանը Կը Տեղադրուի Մարզահամերգային Համալիրին Դիմաց

Հայաստանի ազգային հերոս Կարէն Դեմիրճեանի պրոնզէ արձանը կը տեղադրուի մարզահամերգային համալիրին դիմաց: Այս մասին ֆէյսպուքի ընկերային ցանցի իր էջով գրած է Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Աւինեան՝ կից հրապարակելով լուսանկարներ:

«Քանդակի տեղադրումը տարածքի վերաիմաստաւորման եւ վերականգնման ծրագրի մէկ կարեւոր քայլն է միայն. այն ամբողջական պիտի դառնայ յարակից կանաչապատ պուրակի եւ բարեկարգ հատուածի ստեղծմամբ: Ազդեցիկ արձանի հեղինակը քանդակագործ Սարգիս Բաբայեանն է, ով քանդակել է Դեմիրճեանին՝ իր կերպարին բնորոշ քայլքի, շարժման մէջ՝ պատուանդանից դէպի ժողովուրդը իջնելիս», գրած է Տիգրան Աւինեանը:

«Կարծես Համակեդրոնացման Ճամբար Ըլլայ. Մոռցուած Ճգնաժամը Եւրոպայի Շեմին. Telegraph-ի Անդրադարձը Իրավիճակին

The Telegraph

News Sport Business Opinion Ukraine Money Royals Life Style Travel Culture Puzzles

UK news Politics World Health Defence Science Education Environment Investigations Global Health Security

'It is like a concentration camp': The forgotten crisis on Europe's doorstep

A blockade has been imposed on the breakaway region of Nagorno-Karabakh, limiting the flow of vital supplies and threatening 120,000 lives

By Jessie Williams

16 August 2023 - 11:44am

Related Topics
Global Health Security, Armenia, Azerbaijan, Russia

«The Telegraph» բրիտանական յայտնի պարբերականը լայնածաւալ յօդուած հրապարակած է Լաչինի միջանցքի շրջափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակին մասին: Յօդուածը կը կրէ հետեւեալ խորագիրը՝ «Կարծես համակեդրոնացման ճամբար ըլլայ. մոռցուած ճգնաժամը Եւրոպայի շեմին»:

Յօդուածի հեղինակ Ճեսի Ուիլիըմզ գրուցած է Արցախի քանի մը բնակիչներու հետ, որոնք ներկայացուցած են այնտեղ ստեղծուած ծանր իրավիճակը:

«Եթէ սա շարունակուի, մարդիկ, ի վերջոյ, պիտի մահանան: Մարդիկ արդէն իսկ կը մահանան: Այժմ բոլորը հիւանդ են թերսնման պատճառով եւ մինչեւ մահամերձ վիճակի մէջ չըլլան, չեն երթար հիւանդանոց, քանի որ այնտեղ շատ երկար հերթեր են», ըսած է պարբերականի գրուցակիցը Արցախէն:

Յօդուածին հեղինակը կ'անդրադառնայ Արցախեան առաջին պատերազմին եւ 2020թ.-ի Արցախեան երկրորդ պատերազմին, մանրամասն կը ներկայացնէ այն խնդիրները, այդ շարքին՝ սնունդի, դեղորայքի, վառելանիւթի եւ այլ ապրանքներու պակասը, որոնց բախած են Արցախի բնակիչները շրջափակման 8 ամիսներու ընթացքին: Պարբերականը նաեւ կ'անդրադառնայ Միջազգային Քրէական Դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենօ Օքամփոյի զեկոյցին, որուն մէջ վերջինս կը նախազգուշացնէր, որ Ատրպէյճանը ԼՂ հայերու դէմ ցեղասպանութիւն կը նախապատրաստէ:

«Մենք կորսնցուցած ենք մեր ազատութիւնը, զրկուած ենք մեր իրաւունքներէն: Այժմ մենք կ'ապրինք համակեդրոնացման ճամբարի մէջ», կը նշէ պարբերականի մէկ այլ զրուցակից Արցախէն:

Յօդուածին հեղինակը նաեւ կը մէջբերէ «Հաշտեցման միջոցներ» կազմակերպութեան կովկասեան ծրագրի ղեկավար Լորենս Պրոերսի խօսքերը, որ կը նշէ, որ Ուքրանիոյ մէջ հակամարտութիւնը «մեծապէս թուլացուցած է Լեռնային Ղարաբաղի մէջ Ռուսաստանի գերիշխանութիւնը եւ Ատրպէյճանին բաւական հնարաւորութիւններ տուած է՝ մարտահրաւէր նետելու այդ գերիշխանութեան»:

Նման տեսակէտ յայտնած է նաեւ Բրիտանիոյ խորհրդարանին մէջ Հայաստանի հարցերով խորհրդարանական խումբի նախագահ Թիմ Լութենը:

«Ատրպէյճանը, միանշանակ, օգուտ կը քաղէ այն փաստէն, որ Ռուսաստանը այլ խնդիրներով զբաղած է: Կասկած չունիմ, որ սա Ատրպէյճանի ցեղային զտման ծրագրին մէկ մասն է, եւ նոյնիսկ եթէ այս փուլին սա ցեղասպանութիւն չէ, ապա, միանշանակ, մէկ քայլ անկէ հեռու է», ըսած է Լութենը:

Յօդուածին մէջ նաեւ անդրադարձ կը կատարուի Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակի հարցով Բրիտանիոյ վարած քաղաքականութեան: Ըստ հեղինակին՝ Բրիտանիան չի դատապարտեր Ատրպէյճանը՝ չնայած Հայաստանի հարցով խորհրդարանական խումբը նման յորդորով դիմած է երկրի արտաքին գործերու նախարար Ճեյմս Քլեվըրլիին: Վերջինէն պատասխան չէ ստացուած:

Լութենը քննադատած է Միացեալ Թագաւորութեան կողմէ «կոշտ պատասխանի ակնյայտ բացակայութիւնը»՝ ընդգծելով, որ այլ երկիրներ, ինչպիսիք են Ֆրանսան եւ ԱՄՆ-ն, հրապարակայնօրէն դատապարտած են Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը:

«Մեծ Բրիտանիան պէտք է յստակացնէ, որ նախ, սա անընդունելի է, եւ երկրորդ, եթէ անոնք ոչինչ ընեն, ապա պիտի ըլլան հետեւանքներ, որոնք կրնան սկսիլ Ատրպէյճանի դէմ պատժամիջոցներէն», աւելցուցած է բրիտանացի պատգամաւորը:

Յօդուածին մէջ կը նշուի, որ Բրիտանիոյ լռութեան պատճառը տնտեսութիւնն է. Բրիտանիան Ատրպէյճանի մէջ ամենամեծ օտարերկրեայ ներդրողն է: Վերջին 30 տարուան ընթացքին British Petroleum ընկերութիւնը շուրջ 84 միլիառ տոլար ներդրած է Ատրպէյճանի մէջ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Արցախի Հարցով Յոյս Չներշնչող ՄԱԿ-ի Հրատապ Նիստ

16 Օգոստոսին, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը Հայաստանի հրաւէրով գումարեց հրատապ նիւստ մը՝ քննարկելու համար Արցախի մէջ ստեղծուած իրավիճակը՝ Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի ամբողջական արգելափակումի լոյսին տակ, որ սկսած է յառաջացնել մարդասիրական աղէտի վտանգ:

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան իր ուղերձին մէջ յիշեցուց, որ Լաչինի միջանցքը համաձայնեցուած է որպէս Հայաստանը Արցախին կապող օղակ, առանց այլընտրանքի: Ան կոչ ուղղեց մարդասիրական հարցերը լուծելու միջազգային հանրութեան վճռական միջամտութեամբ, այլապէս արցախցիները կրնան ենթարկուիլ ցեղային զտումի:

Ռուսիոյ ներկայացուցիչին տեղակալը յայտնեց իր երկրին մտահոգութիւնը, կոչ ուղղելով ապաշրջափակելու Լաչինի միջանցքը եւ գործածելու այլ ճանապարհներ եւս: Տմիթրի Փոլիանսքի առաջարկեց հակամարտութիւնը լուծել Ատրպէյճանի օրէնքներու ծիրին մէջ, միջազգայնօրէն ընդունուած սկզբունքներու հիման վրա՝ տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչումով:

Միացեալ Նահանգներու ներկայացուցիչը եւս խոր մտահոգութիւն յայտնեց Լաչինի արգելափակումին համար, սակայն հնարաւոր համարեց փոխզիջումներով այլ ուղիներու գործածութիւնը: Լինտա Թոմաս-Կրինֆիլտ շեշտեց նաեւ, որ խաղաղութիւնը պէտք է ներառէ Արցախի բնակչութեան իրաւունքներու եւ անվտանգութեան պաշտպանութիւնը:

Եւրոմիութեան պատուիրակութեան գործերու յանձնակատարը Ատրպէյճանէն պահանջեց անմիջապէս Աղտամի ճամբան բանալ մարդասիրական մատակարարումներու համար, սակայն պնդեց, որ այդ պէտք չէ ըլլայ Լաչինը չվերաբանալու տարբերակ:

Իսկ Ատրպէյճանի ներկայացուցիչ Եաշար Ալիեւ տեղի ունեցածին պատասխանատուն համարեց հայկական կողմը, որ կը մերժէ Աղտամի ճանապարհի գործածութիւնը՞՝ մարդասիրական բեռ փոխադրելու համար: Ան նաեւ Լաչինի միջանցքին վրայ անցակէտի տեղադրումը պատճառաբանեց՝ ըսելով, որ «այդ ատրպէյճանական տարածք է եւ հայերը այդ միջանցքը գործածած են շարունակաբար ռազմական ապօրինի գործողութիւններու համար»: Ալիեւ Արցախի հայութիւնը համարեց Ատրպէյճանի քաղաքացիներ ու վերստին ստեց, երբ դիտել տուաւ, թէ Լաչինի փակումէն ետք քաղաքացիներու տեղաշարժը չէ սառած:

ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի այս հրատապ նիստին ընթացքին ընթերցուած ելոյթներուն բովանդակութիւնն ու եզրափակիչ յայտարարութիւն չհրապարակելու քայլը վերստին ցոյց տուին, որ միջազգային ուժերը Արցախի հարցով կը բաւարարուին իրենց դասական յայտարարութիւններով՝ մտահոգութեան արտայայտութեամբ ու ձեւական կոչերով, գործնական եւ արդիւնաւէտ միջամտութեան ամբողջական բացակայութեամբ: Աւելին, միջազգային ուժերը սեփական շահերէ մեկնելով կը խուսափին առնուազն յստակօրէն մատնանշելէ յանցագործն ու զոհը, այլ երկուքը հաւասարեցնելով կը պահանջեն ինքնազսպումի դիմել ու խաղաղութեան եզրեր գտնել: ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի անդամներուն մեծամասնութիւնը նշում կատարեց Աղտամի ճամբան որպէս այլընտրանք գործածելու գաղափարին, որ խորքին մէջ Պաքուի առաջարկն է: Յայտարարութիւններուն մէջ գուցէ ամէնէն վտանգաւոր բովանդակութիւնը կը պատկանէր Ռուսիոյ ներկայացուցիչին, ուր ան բացայայտօրէն նշում կատարեց Արցախի հարցի լուծումին համար ատրպէյճանական օրէնքներու գործածութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչումով:

Ուստի, Անվտանգութեան խորհուրդի նշեալ հրատապ նիստը հայկական խնդիրներուն համար ոչ միայն լուծումներ չներկայացուց, այլ հայութեան աննպաստ գաղափարներ առաջադրեց: Մասնաւորաբար, Անվտանգութեան խորհուրդի հրատապ նիստը որպէս երկայրի սուր ցոյց տուաւ, թէ մոռացութեան ենթարկուած է Արցախի ժողովուրդին իսկական հարցը՝ անկախութիւնն ու ազատ ինքնորոշումի իրաւունքը, շեշտը փոխարէնը դնելով մարդասիրական ճգնաժամի առկայութեան եւ օգնութիւն փոխանցելու անհրաժեշտութեան վրայ, առանց անդրադառնալու իսկական, կարեւորագոյն հարցերուն:

Բարեբախտաբար, նկատի ունենալով բազմաթիւ առիթներով հայութեան եւ այլոց դառն փորձառութիւնը միջազգային ընտանիքին հետ, հայկական շրջանակներուն մէջ շատ չեն անոնք, որոնք ընդհանրապէս որեւէ դրական ակնկալիք ունին Անվտանգութեան խորհուրդէն եւ միջազգային ընտանիքէն, քաջ իմանալով, որ նոյնիսկ եթէ հայանպաստ որոշումներ կայացուին, մեծապէս բացառուած է անոնց գործնականացումը, որովհետեւ Պաքու վստահաբար պիտի անտեսէ պահանջուածը, իսկ աշխարհը լաւագոյն պարագային պիտի բաւարարուի իրողութիւնը դատապարտելով միայն, վկայ՝ տակաւին հայրենիք չվերադարձած գերիները, զինադադարի ամէնօրեայ խախտումները, թշնամական ներթափանցումները եւ արցախահայութեան գոյութեան վտանգումը:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Սիտնի

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

It is stated that a separate agreement should be signed between Armenia and Azerbaijan, according to which close ties between the Armenian population of the former Nagorno-Karabakh Autonomous Oblast of Soviet Azerbaijan and Armenia will be ensured, and the unimpeded receipt of humanitarian and economic aid for the Armenian population from outside should be ensured.

Petrosyan accompanied the publication of the document on Facebook with the following post: "I have to publish it so that the public understands what is really happening… Today, [Russian President Vladimir] Putin has the opportunity to change his attitude and plans at the UN Security Council session… Let's wait."

The proposals were made by Russian Foreign Minister Sergey Lavrov regarding Nagorno-Karabakh late last month. On July 25, Lavrov met separately with the foreign ministers of Armenia and Azerbaijan, Ararat Mirzoyan and Jeyhun Bayramov, in Moscow, and then the three ministers' tripartite meeting was also held. Receiving Bayramov in Moscow, Lavrov announced that in addition to the already signed statements, a number of documents were being prepared for discussion by the leaders of Armenia, Azerbaijan and Russia, without providing details about their content.

Political commentator Hakob Badalian voiced doubts regarding whether the revealed document was a submitted proposal or just a draft. He said that in any case the content of the presented proposals was unacceptable to both Yerevan and Stepanakert as it meant Nagorno-Karabakh's dissolution. He, however, considered remarkable the timing of the leak – hours before the expected discussion at the UN Security Council and after a phone call between Lavrov and Bayramov.

Խումբ Մը Թուրք Գործիչներ Կոչ Ըրած Են Դադրեցնելու Արցախի Շրջափակումը

Արդէն 8 ամիսէ Ատրպէյճանը կը շարունակէ Լաչինի (Բերձոր) միջանցքի շրջափակումը, ինչի հետեւանքով յառաջացած է մարդասիրական ճգնաժամ: Թուրքիայէն խումբ մը գրողներ, քաղաքական գործիչներ եւ իրաւապաշտպաններ (անոնց շարքին կան նաեւ հայեր) միջազգային հանրութեան կոչ ըրած են քայլեր ձեռնարկելու:

Այս մասին կը յայտնէ «Ermenihaber»-ը:

Թուրք գործիչները Արցախի շրջափակումը դադրեցնելու մասին իրենց կոչը ձեւակերպած են «Թուրքիոյ քաղաքացիներու անունով»՝ ուղղուած միջազգային հանրութեան:

Յայտարարութեան մէջ մասնաւորապէս կ՚ըսուի.

«Պաքուի վարչակարգը, Անգարայի վարչակարգին աջակցութեամբ, ամիսներ շարունակ շրջափակում կ՚իրականացնէ Լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդին դէմ, ինչ որ օրակարգ կը բերէ ցեղասպանութեան հաւանականութիւնը: Ղարաբաղեան վերջին պատերազմէն յետոյ, որուն մէջ ներգրաւուած էր Թուրքիոյ զինուժը, Ստեփանակերտ-Գորիս ճանապարհը, որ կ՚ապահովէէ անցումը Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ եւ պէտք է բաց ըլլայ մարդասիրական օգնութեան ինքնաշարժներուն, շտապ օգնութեան ծառայութիւններուն եւ խաղաղապահ ուժերուն համար, շրջափակման մէջ է եւ փակ 2022 թուականի Դեկտեմբեր 12-էն:

Ջնայած ՄԱԿ-ը, Եւրոմիութեան կառոյցները եւ Եւրոխորհուրդի կառոյցները ամիսներ շարունակ Ատրպէյճանին կոչ կ՚ընեն դադրեցնելու 120 հազար մարդոց շրջափակումը Ղարաբաղի մէջ, Պաքուի վարչակարգը կ՚անտեսէ բոլոր կոչերը, կը մերժէ կամ կը հերքէ շրջափակումը: Մինչդեռ բոլորը գիտեն, որ առաջին անհրաժեշտութեան որեւէ ապրանք չի կրնար մտնել Ղարաբաղ եւ ոեւէ ղարաբաղցի չի կրնար դուրս գալ շրջանէն նոյնիսկ իր հրատապ առողջական կարիքները հոգալու համար:

Խորացող ճգնաժամի պայմաններուն մէջ եւ հաստատելով միջազգային հանրութեան մտահոգութիւնները՝ Պաքուի բռնապետ Իլհամ Ալիեւը կը շարունակէ բացայայտ կերպով եւ անընդհատ սպառնալ ղարաբաղցիներուն: Այնքան, որ Միջազգային Քրէական Դատարանի նախկին գլխաւոր դատախազ Լուիս Մորենօ Օքամփօն կարեւոր յօդուած հրապարակած է, ուր Ալիեւի գործողութիւնները Ղարաբաղի մէջ կ՚որակէ որպէս ցեղասպանութիւն»:

Թուրք գործիչները իրենց մտահոգութիւնը յայտնած են Արցախի մէջ ստեղծուած իրավիճակին առնչութեամբ՝ նշելով, որ իրենք կը նկատեն, որ միջազգային հանրութիւնը բաւարար զգայունութեամբ չի գործում զարգացումներուն նկատմամբ:

«Ցեղասպանութիւնները կանխարգիլելը չի նշանակեր սպասել անոնց կատարման, յետոյ միջամտել: Նման վտանգը կանխելու համար հիմա պէտք է աշխոյժ գործողութիւններ ձեռնարկել», նշուած է յայտարարութեան մէջ:

Անոնք բոլոր պետութիւններուն, միջազգային կազմակերպութիւններուն եւ միջազգային հանրութեան, մասնաւորապէս՝ ՄԱԿ-ի եւ Կարմիր Խաչի Միջազգային Կազմակերպութեան կոչ ըրած են աշխոյժ դիրքորոշում ցուցաբերելու:

«Ինչպէս 1948-49 թուականներուն ճեղքուեցաւ Պերլինի շրջափակումը, այնպէս ալ մենք կոչ կ՚ընենք օդային ճանապարհով ճեղքելու Ղարաբաղի շրջափակումը եւ անով վերջ դնելու մարդկային այս ողբերգութեան»:

Համակարգումի Պակասը եւ Անտեղի Մրցակցութիւններ

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Համասփիւռքեան մեր իրականութեան ամենէն խոցելի կէտերէն մէկը հայկական կազմակերպութիւններու միջեւ համակարգումի պակասն է: Այս յանցանքին պատասխանատուութիւնը առաւելաբար կ՚իյնայ մեր կազմակերպութիւնները ղեկավարող անձերու ուսերուն: Անտեղի մրցակցութիւններ, ծրագրումի եւ կազմակերպումի պակաս, համակարգումի բացակայութիւն ... այս բոլորը իրենց ժխտական անդրադարձերը կ՚ունենան մեր հանրային կեանքին մէջ:

Ազգապահանման համար տարասփիւռ հայութիւնը մտահոգութեան լուրջ պատճառներ ունի: Համահայկական կեանքի ապահովութեան սպառնացող վտանգներ կան: Ազգային գիտակցութեան եւ հաւաքական մտածողութեան խնդիր ունինք: Ապասերումի վտանգին եւ դասալքութեան հակումներուն դէմ կենաց եւ մահու պայքարի մէջ ենք: Այս պայմաններուն մէջ երբեք արդարանալի չեն նոյնատեսակ գործունէութիւններու կազմակերպումը: Որոշապէս ուժերու վատնում է միեւնոյն աշխատանքը տանիլ գրեթէ միեւնոյն վայրին մէջ՝ ի խնդիր միեւնոյն նպատակին: Օրինակի համար ինչ հարկ կայ հայկական երկու վարժարաններ կանգնել միեւնոյն պողոտային վրայ երբ բազմաթիւ հայկական քաղաքներ կամ հայաշատ շրջաններ կը տառապին հայկական դպրոցի չգոյութենէն: Ի՞նչ հարկ կայ նոյն թաղին մէջ նոյն յարանուանութեան պատկանող երկու տարբեր եկեղեցիներ կառուցել երբ շատ վայրերու մէջ հայ մարդիկ զրկուած են այդ առանձնաշնորհումէն:

Ուժերու ինչ վատնում է եւ մտքերու եւ հոգիներու ինչ մեծ գայթակղութիւն երբ հայկական տարբեր եկեղեցիներ եւ տարբեր կուսակցութիւններ տարբեր վայրերու մէջ նոյն օրը Վարդանանց տօն կամ Մեծ Եղեռնի ոգեկոչում կ՚ընեն:

Քանի՞ հատ Հայ Դատի նուիրուած տարբեր յանձնախումբեր յաջորդաբար զիրենք հիւրասիրող երկրին պետական մարմիններու դռները պիտի բախեն՝ Հայկական Դատի եւ պահանջատիրութեան առաջադրութեամբ:

Շար.ը էջ 14

Հայ-Ֆիննական Բարեկամութիւնը Խորհրդանշող Յուշակոթող. Օծուեցաւ եւ Բացուեցաւ Ֆինլանտիայի Մէջ Առաջին Հայկական Խաչքարը

Հայ-ֆիննական բարեկամութիւնը խորհրդանշող յուշակոթող. Օգոստոսի 19-ին Ֆինլանտիայի՝ բնակչութեան թիւով երկրորդ քաղաքը համարուող Էսպուի Սուրբ Հերման եկեղեցւոյ բակին մէջ օծուեցաւ եւ բացուեցաւ Ֆինլանտիայի առաջին հայկական խաչքարը:

«Արմենպրես»-ի թղթակիցի հետ զրոյցի ընթացքին Հայ-ֆիննական համայնքի փոխնախագահ Գրիգորի Եղիազարեանը նշեց, որ Հայաստան-Ֆինլանտիա միութեան նախաձեռնութեամբ հիմնուած խաչքարը հեղինակած է հայաստանաբնակ քանդակագործ Յովհաննես Ստեփանեանը:

«Ֆինլանտիայի մէջ Հայ համայնքը արդէն կը գործէ շուրջ 11 տարի: Բոլոր սկանտինաւեան երկրներուն մէջ կան խաչքարեր, իսկ Ֆինլանտիայի մէջ ընդհանրապէս չկար հայկական որեւէ մասունք կամ խաչքար, այդ իսկ պատճառով երկար ժամանակ կը փորձէինք իրագործել այս նախագիծը: Յայտարարութիւն տեղադրեցինք նախագիծի իրագործման համար՝ գումար հաւաքելու նպատակով: Մեծ թիւով հայեր արձագանքեցին եւ ստացուեաց այնպէս, որ բաւականին արագ՝ արդէն գարնանը, այն բերեցինք Ֆինլանտիա, տեղադրեցինք, իսկ այժմ այն արդէն օծուեցաւ եւ պաշտօնապէս բացուեցաւ»,- ըսաւ ան:

Համայնքի փոխնախագահը ընդգծեց, որ խաչքարը Հին Ջուղայի Ատրպէյճանի կողմէն ոչնչացուած խաչքարերէն մէկի կրկնօրինակն է:

«Իսկ թէ ինչո՞ւ ենք այդ տեղը ընտրել խաչքարի տեղադրման համար, որովհետեւ այդ տեղի մէջ կը գտնուի Ֆիննական ուղղափառ Սուրբ Հերման եկեղեցին: Մենք նախագիծը մեկնարկելու ատեն զրուցեցինք Սուրբ Հերման եկեղեցւոյ հոգեւոր հայր Պետրի Կորհոնենի հետ, որ շատ լաւ տեղեակ է Հայոց պատմութեանը, ան ողջունեց մեր նախաձեռնութիւնը եւ մեզի մի շարք հարցերուն մէջ աջակցեցաւ, ինչպէս նաեւ օգնեց քաղաքապետարանի մէջ թոյլտուութիւն ստանալու հարցով»,- ըսաւ ան:

Եղիազարեանը նշեց, որ խաչքարի տեղադրումը է՛ւ իր է՛ւ Ֆինլանտիայի մէջ բնակող բոլոր հայերու համար մեծ նշանակութիւն ունի, քանի որ անոնք մօտակայքում չունէին ոչ մի հայկական սրբավայր, հայկական շունչ ունեցող վայր, որտեղ կարող էին համախմբուել եւ տարբեր առիթներուն այցելել:

«Այսուհետեւ Խաչքարը կ՚լլայ համախմբող կոթող, որ մեզ կը կապի նաեւ Հայաստանի հետ»,- ընդգծեց ան:

Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան ներկայացուցիչ Հայարփի Դրմէյանը, կարեւորելով հայ-ֆիննական բարեկամութեան նուիրուած խաչքարի բա-

Շար.ը էջ 12

Արեւմտեան Թեմի Նոր Հրատարակութիւնները

Արեւմտեան Թեմը, հաւատարիմ գրահրատարակչական իր հարուստ աւանդոյթներին, Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ շարունակում է հարստացնել հոգեւոր գրականութեան շարքը նոր հրատարակութիւններով:

Վերջին շաբաթներին լոյս տեսան հոգեւոր, պատմական, աստուածաբանական բովանդակութեան նոր գրքեր, որոնց հեղինակն է Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանը: Կրօնական-աստուածաբանական ոլորտի մէջ անուանի հոգեւոր հօր հեղինակած նոր գրքերը ներկայացնենք ըստ հերթականութեան:



«ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ»: Այս աշխատանքի տիրապետող թեման Աստուծոյ հետ յարաբերութիւնն է, որով ճշտւում է մարդու բարոյական բովանդակութիւնը, կեանքի արժէքը եւ նշանակութիւնը տիեզերական բովանդակ իրականութեան մէջ: Բաժին առ բաժին Հայր Սուրբը մեկնաբանում է «խորհուրդը» եւ նրա նշանակութիւնը, ապաշխարութիւնը, գիտակից զղջումը, հին ու նոր կարծիքներ է բերում այդ թեմաների մասին: «Մարդս իր ամէնէն մեղաւոր թափառումներուն մէջ իսկ կրնայ Աստուծոյ վերադառնալ, եթէ իր մէջ մարած չէ փրկուելու յոյսը, փրկուելու իղձը», ամփոփում է Հայր Տաճատը:

«ՔԱԼԵՑԷ՛Ք, ՔԱՆԻ ՈՐ ԼՈՅՍԸ ՈՒՆԻՔ». ՀԱՐՑԵՐ, ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ» ստուար հատորը, ինչպէս խորագիրն էլ յուշում է, պարունակում է բազում պարզաբանութիւններ այն հարցերի մասին, որոնք բոլորս ունենում ենք եկեղեցու հետ առընչուելիս: «Որտեղի՞ց եկած եմ հոս», առաջին այս հարցումով է սկսում գիրքը, որի՝ Հայր Տաճատի պատասխանը, միւս պատասխանների նման, ոչ սովորական է եւ խորիմաստ. «Աշխարհի վրայ, բնութեան մէջ, ամէն ինչ ծրագրուած եւ սահմանուած է: Եւ ծրագրումը եւ սահմանումը կը պահանջէ «ծրագրող մը», «սահմանող մը»: Հարցումները յաճախ խիստ արդիական են, ինչպէս օրինակ՝ «ինչու՞ եկեղեցիի պատկանիլ», «ինչու՞ եկեղեցի երթալ», «դիակիզում», «Աստուած կը լսէ՞ մեր աղօթքը» եւ այլն: Վերջին այս հարցումին պատասխանելիս Հայր Տաճատը նշում է. «Որպէսզի Աստուած մեր աղօթքները լսէ, մօտենայ մեզի եւ Իր Հայրական սէրը եւ հոգատարութիւնը յայտնէ մեզի, մեր կողմէ պէտք է միտքը, հոգին, հաւատքը եւ վստահութիւնը Իրեն յայտնենք մտերիմ աղօթքներու միջոցով»:



«ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԼՈՒՍԱՒՈՐԷ...» հատորը նոյնպէս պարզաբանում է հաւատքի, աստուածպաշտութեան զանազան կողմերը՝ պատասխանելով ի մասնաւորի այն հարցերին, թէ ո՞վ է ուխտաւորը, ինչ են խառնամուսնութիւնները, սուրբ Պսակի խորհուրդը, ընտանիք, դաստիարակութիւն, ազգային մշակոյթ՝ աստուածաբանութեան կողմից դիտարկուած եւ այլն: Բազմաթիւ սահմանումներից յիշատակենք միայն մէկը, միւս հատուածների դիտարկումը թողնելով ընթերցողին. իր գրքում Հայր Տաճատը նշում է. «Ընտանիքը մարդկութեան առաջին կրթարանն է, ուր հայրն ու մայրը կը գործեն իբր դաստիարակներ, ուսուցիչներ եւ նկարագիր կերտողներ», :



ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ - ԻՄԱՑԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԵԴՐՈՆՆԵՐԸ (Ե-ԺԹ. դարեր) հիմնարար աշխատութիւն է, որում հեղինակը մանրամասն նկարագրում է հայոց նշանաւոր վանքերը, վարդապետարանները, հոգեւոր ու կրթական, ուսումնագիտական եւ մշակութային կենտրոնները: Հայր Տաճատը մեր գիտութեան մէջ այս ոլորտի ամէնից իրազեկ հեղինակն է, եւ 500 էջանոց այս աշխատութիւնը գալիս է ամբողջացնելու հայ հոգեւոր կենտրոնների մասին նրա նախորդ ուսումնասիրութիւնների շարքը: «Հայաստանի դպրոցները, դպրանոցները եւ բարձր տեսակի վարդապետարանները յառաջապահ կեդրոններ եղան կրթութեան, ուսումնառութեան եւ գիտութիւններու: Պատմական Հայաստանի դպրոցը կամ ուսումնարանը եւ վարդապետարանը միշտ հնոց մը եղած է, ուր մարդոց նկարագիրը եւ իմացականութիւնը թրծուած, ուր նաեւ մարդոց բարոյական սկզբունքները եւ կեցուածքները կազմուած են: Անոնք կը խորհրդանշեն մեր ժողովուրդին հոգեկան, իմացական թէ գիտական յառաջդիմութիւնը»: Այս սկզբունքով աշխատութեան մէջ նկարագրուած են հայոց առաջին դպրոցներից ողջ միջնադարով մինչեւ 19-րդ դարը երկարող ուսումնական կենտրոնները, ծրագրերը, կրթութեան կազմակերպումը: Ոչ մի դպրանոց ու յայտնի վարդապետ եւ կարեւոր աղբիւր դուրս չի մնացել նկարագրութիւնից: Աշխատութիւնն իր տեսակի մէջ հանրագիտարանային բնոյթ ունի հայ հոգեւոր կրթութեան մասին, եւ վստահ ենք, դեռ պիտի արժեւորուի ու ըստ արժանւոյն ներկայացուի լայն ընթերցողին ու գիտութեանը:

Եւ այդ առումով յիշարժան է Յովնան Արք. Տէրտէրեանի «Սրտի խօսքի» մէջ գրանցուած այն միտքը, առնուած Ֆրանսացի մեծանուն գիտնական Անթուան Մէյյէից, ըստ որի՝ «Հայերը իրենց համար ստեղծեր են Ազգային Հոգի: Այդ Հոգին կ՛ապրի իրենց Յուշարձաններուն մէջ, անոնց Վանքերուն եւ Եկեղեցիներուն մէջ, ինչ որ ո՛չ մէկ ուրիշ Եկեղեցի ունի: Անիկա կ՛ապրի ... եւ ո՛րեւէ իշխանութիւն չէ կրցած խախտել այդ Հոգին, որ իր գոյութիւնը պահպանած է դարերու ընթացքին»:

Հայ-Ֆիննական Բարեկամութիւնը

Շարունակուած էջ 11-էն

ցումը, նշեց, որ կոթողը յետայսու հանդիսանալու է Ֆինլանտիայի հայ համայնքի ներկայութեան բացառիկ խորհրդանիշը: Յիշատակելով, որ խաչքարը Հին Զուղայի Ատրպէյճ կողմէ ոչնչացուած խաչքարերէն մէկի կրկնօրինակն է՝ հայ դիւանագէտը անդրադարձաւ աւելի քան 8 ամիս շարունակուող Լաչինի միջանցքի շրջափակմանը՝ ընդգծելով, որ Լեռնային Ղարաբաղի հայութիւնը կանգնած է մարդասիրական աղէտի շէմին եւ միջազգային հանրութեան համապատասխան քայլերու չձեռնարկման դէպքին ինչպէս բնիկ հայութիւնը, այնպէս ալ հայկական ժառանգութիւնը կարող են արժանանալ Հին Զուղայի հայութեան եւ հայկական մշակութային արժէքներու ճակատագրին:

Միջոցառման ներկայ էին նաեւ Հայաստան-Ֆինլանտիա միութեան նախագահ Դանիէլ Դաւթեանը, Հայաստանի մէջ Ֆինլանտիայի դեսպան Կիրստի Նարինենը, համայն Ֆինլանտիայի Ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Լէօ Մակկոնենը, Սուրբ Հերման եկեղեցւոյ հոգեւոր հայր Պետրի Կորհոնենը:

Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ Կեդրոնական Եւրոպայի եւ Շուէյտի հայրապետական պատուիրակ Տիրան Եպիսկոպոս Պետրոսեանի ձեռամբ տեղի ունեցաւ խաչքարի օծման կարգ: Հայկական երաժշտական կատարումներով հանդէս եկաւ հայ-ֆիննական «Լոյս» (Valo) երգչախումբը:

Շ Ն Ո Ր Հ Ա Ն Դ Է Ս

Հովանաւորութեամբ՝
Հայ Առաքելական եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ
Գերշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի

Կալիֆորնիայի Հայ Գրողների Միութիւնը ներկայացնում է՝
Արձակագիր Ռուբէն Կորիւնի (Ռուբէն Ս. Քեշիշեան)
վերջին չորս գրքերի՝
1-Կեանքի առաքինութեան ճառագումը
2-Կեանքի ոլորտներում
3-Մի բուռ պատկերներ
4-Հանապազ դու իմ սրտում ես

Բացման խօսք՝ Հայկ Մադոյեան
Գրքերի արժեւորում կը կատարի՝
Գրող-իրաւաբան՝ Հակոբ Մկրտչեան
Հանդիսավար՝ Գրող Կիմա Կիրակոսեան
Ողջոյնի խօսքեր
Գեղարուեստական բաժին
Հիւրասիրութիւն

Տեղի կ'ունենայ երեքշաբթի, 19 Սեպտեմբեր 2023, երեկոյեան ժամի 7-ին
Սրբոց Ղեւոնդեաց Մայր տաճարի՝ «Արմէն եւ Կլորիա Համբար» սրահում
Հասցէ՝ 3325 N. Glenoaks Blvd. Burbank, CA 91504
Մուտքն ազատ է

Հայ-Գերմանական Միացեալ Պեղումներ Գեղարքունիքի Մարզում

Այս տարուայ համար արդէն աւարտուած են համարւում հայ-գերմանական միացեալ արշաւախմբի կողմից Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ եւ Արտանիշ բնակավայրերի միջակայքում գտնուող «Արտանիշ-9» հնավայրում իրականացուած պեղումները, որոնք սկսուել էին 2020 թվականից ու շարունակուել այս տարուայ Յուլիսից:

Ինչպես «Արմենփրես»-ին տեղեկացրեց հնագիտական արշաւախմբի անդամ, հնագէտ Մարիամ Ամիրեանը, պեղումներն իրականացուել են ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արշաւախմբի կողմից՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետութեան Հալէի Մարտին Լութերի անուան համալսարանի հետ համատեղ, Արսեն Բոբոխեանի եւ Ռենէ Կունցէի համաղեկավարութեամբ:

Պեղումները տուել են չափազանց կարեւոր արդիւնքներ ու տեղեկութիւններ Սեւանա լճի հիւսիս-արեւելեան ափին՝ Արտանիշի թերակղզիում, մեզանից շուրջ 5 հազար տարի առաջ հիմնադրուած ու շուրջ երկու դար գործող բնակավայրի մասին: Հնավայրում բացուել է վաղ բրոնզեդարեան բնակատեղի եւ դամբարան, որը թուագրում է Ք.ա. III հազարամեակի առաջին կէսով:

«Առհասարակ, Սեւանա լճի հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան ափի հնագիտական յուշարձանները բաւականին քիչ են ուսումնասիրուած, ու այս առումով մեր կատարած աշխատանքը չափազանց կարեւոր արժէք ու նշանակութիւն է ձեռք բերում: Մեր արշաւախումբը 2015 թվականին հետախուզական աշխատանքներ իրականացրեց այս բլուրի տարածքում՝ յայտնաբերելով չափազանց կարեւոր ու հարուստ հնագիտական նիւթեր պարունակող «Արտանիշ 9» հնավայրը, որի պեղումները սկսեցինք 2020 թուականից: Ինչպէս նախորդ, այնպես էլ այս տարուայ ընթացքում կատարուած պեղումները տուել են ապշեցուցիչ արդիւնքներ: Նախ, սա առայժմ Սեւանա լճի հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան ափին պեղուած միակ հնավայրն է, որը պատկանում է կուրարաքսեան մշակոյթի վերջին փուլին (Ք.ա. III հազարամեակի սկիզբ): Պեղումները պարզում են, որ բնակավայրի կացարաններն ունեն կլոր յատակագիծ, քարէ հիմք եւ կաւածեփ յատակներ: Հնարաւոր է, որ դրանց առաստաղը պահուել է կենտրոնում տեղադրուած փայտէ գերանի միջոցով: Կացարաններից մէկի կենտրոնում բացուել է նաեւ կաւակերտ օջախ: Բաւականին լաւ են պահպանուած պատերը, որոնց պահպանուած բարձրութիւնը հասնում է մինչեւ 1 մետրի:

Այս հատուածի պեղումները եւ իրականացուած գեոֆիզիկական աշխատանքները փաստում են, որ բլուրի ողջ շրջագծով մէկ տարածւում է մինչեւ 1,5 մետր լայնութեամբ բաւականին զանգուածեղ պատ, որը կարող էր պարիսպ ծառայել բնակավայրի համար, թէեւ հնագէտների մօտ իշխում է այն կարծիքը, որ կուրարաքսեան մշակոյթի բնակավայրերն ամրաշինական տարրեր չեն պարունակել: Սակայն, այս դէպքում մենք, ամենայն հաւանականութեամբ, գործ ունենք հենց ամրաշինութեան հետ, որը կարող է լինել շատ հետաքրքիր նորութիւն:

Ձեռք բերուած տուեալները փաստում են, որ սկզբից բնակեցուել է բլուրի արեւմտեան հատուածը, յետոյ այն աստիճանաբար ընդարձակուել ու հասել է մինչեւ արեւելեան հատուած: Բնակավայրը գործել է Ք.ա. 28-26-րդ դարերում, որից յետոյ այն լքուել է: Մեր կարծիքն այդպիսին է առայժմ, քանի որ այստեղ դեռ չենք յայտնաբերել կրակի, աւերածութիւնների կամ թշնամական յարձակումների հետքեր: Իսկ բնակավայրի լքուելուց մէկ դար անց այստեղ հաստատուած բեդենեան մշակոյթի կրողները տարածքն օգտագործել են թաղումների համար:

Դաշտային եւ լաբորատոր հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ այստեղ ապրող հասարակութիւնը զբաղուել է երկրագործութեամբ, անասնապահութեամբ, որսորդութեամբ, մետաղագործութեամբ, ունեցել է ինքնատիպ ճարտարապետական եւ բրուտագործական աւանդոյթներ: Բնակատեղիից յայտնաբերուած կենդանական եւ բուսական մնացորդների ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ այստեղ մարդիկ զբաղուել են ձկնորսութեամբ, վայրի կենդանիների որսով, ընտանի անասունների՝ ձիերի, խոշոր եւ մանր եղջերաւոր անասունների բուծմամբ, հացաբոյսերի մշակութեամբ, մետաղի մշակմամբ: Վերջինի հետ կապուած, ճիշտ է, արհեստանոց առայժմ չի փաստագրուել, սակայն փոխարէնը յայտնաբերուել են մետաղէ իրերի բեկորներ, մետաղամշակման մէջ օգտագործուող հալոցներ եւ կաղապարներ, որոնք միանգամայն հաստատում են մեր կարծիքը:

Գտածոների մէջ արժէքաւոր իրեր են համարւում տարատեսակ ուլունքները, բրոնզե իրերի մասերը, վանակատէ շեղբերն ու նետասլաքները, ոսկրէ իլիկի գլուխները, քարէ եւ ոսկրէ աշխատանքային գործիքները, կայծքարէ մանգաղի ներդիրները, կաւէ օջախների բեկորներն ու կաղապարները: Հետաքրքիր է կաւակերտ անիւի մանրակերտը, որը փաստում է առ այն, որ մեզանից 5 հազար տարի առաջ այստեղ ապրող մարդիկ տնտեսութեան մէջ ու կենցաղում արդէն կիրառել են անիւը:

Պեղումների ժամանակ մեզ համար այս տարուայ անակնկալներից մեկն էլ այն եղաւ, որ պատերից մէկի տակ մարդկային թաղման դէպքի հանդիպեցինք. արդեօ՞ք այս դէպքում գործ ունենք բազմաշերտ մշակութային յուշարձանի հետ, թէ՞ պարզապէս կուրարքսոան մշակոյթը կրող հասարակութեան սովորութեան հետ ենք առնչւում, երբ թաղումներն իրականացւում էին տան յատակի տակ, պարզ կը լինի հետագայ ուսումնասիրութիւնների ընթացքում:

Այս ժամանակների երկրագործութիւնն ուսումնասիրելու համար հետաքրքիր տուեալներ ենք փաստել գետնափոր բազմաշերտ լիցք ունեցող հորում, որը ծառայել է որպէս հացահատիկի ամբար: Այդ են փաստում բուսական մնացորդների մէջ յայտնաբերուած ցորենի եւ գարու ածխացած հատիկները»,- ներկայացրեց Մարիամ Ամիրեանը:

Արշաւախմբի անդամ, հնաբուսաբան Ռոման Յովսէփեանի ներկայացմամբ՝ բուսական մնացորդների հետազօտութիւնները ցոյց են տուել, որ սովորական փափուկ ցորեն եւ թեփուկաւոր գարի են հիմնականում մշակել տարածքում ու պաշարել այստեղ:

«Հացաբոյսերի մշակութիւնը, ամենայն հաւանականութեամբ, եղել է յարակից սարերի լանջերին՝ համեմատաբար քիչ թեքութեամբ, անջրդի պայմաններում: Մենք ունենք, բացի հացահատիկի մնացորդներից, նաեւ հենց հասկի մնացորդներ, այսինքն՝ կալման հետեւանքով մնացած այդ թեփը, քիստերը, ինչը վկայում է, որ հացահատիկը ոչ թէ ինչ-որ տեղից են բերել եւ օգտագործել, այլ հենց տարածքում, շրջակայքում են մշակել»,- նշեց Ռոման Յովսէփեանը:

«Այս տարի դամբարանի պեղումներից առայժմ ունենք միայն բրոնզէ մատանի ու գօտու մաս եւ բազմաթիւ խեցեբեկորներ, որոնք պէտք է վերաբերուեն եկուրարաքսեան շրջանին: Ցուսով ենք, որ եկող տարուայ աշխատանքները հնավայրի դամբարաններում կը տան բաւականին հետաքրքիր տուեալներ, որոնց միջոցով կը կարողանանք վերականգնել բլուրի պատմութիւնը բնակավայրի անկումից յետոյ»,- յաւելեց Մարիամ Ամիրեանը:

Արշաւախմբի գերմանական կողմն էլ հետաքրքրուած է տարածքում մետաղների, մասնաւորապէս, ոսկու հնագոյն մշակման հետքերով: Հալէի համալսարանի գիտաշխատող Ռենէ Կունցեն այս ուղղութեամբ հայկական կողմի հետ համագործակցութեամբ հնագիտական հետազօտութիւններ է կատարել նաեւ Սոթքի տարածքում:

«Հայաստանի տարբեր հնավայրերից գտնուած ոսկու նմուշներ ենք հետազօտել եւ պարզել, որ դրանց մեծ մասի աղբիւրը եղել է Սոթքի Ծարասարի հատուածը: Ինչ վերաբերում է բրոնզի մշակմանը, ապա, այն մեծամասամբ ստացել են պղնձի եւ անագի խառնուրդով: Սակայն, պետք է նկատել, որ անագը տեղական չէ, տարածաշրջանում անագ չկայ: Հնարաւոր է՝ այն բերուել է կենտրոնական Ասիայից, ինչը վկայում է այն մասին, որ այս տարածքը տնտեսական-քաղաքական կապերի մէջ է եղել կենտրոնական Ասիայի, նաեւ՝ Իրանական բարձրավանդակի երկրների հետ: Մեր համալսարանը եւ «Գերմանական գիտահետազօտական հիմնադրամը», որպես պեղումների համար հիմնական միջոցներ տրամադրող կառոյցներ, ցանկութիւն ու նպատակ ունեն դեռ երկար տարիներ ուսումնասիրել այս հնավայրը, մեր հայ գործընկերների հետ փորձել տալ բոլոր այն հարցերի պատասխանը, որոնք կարող են նորովի լոյս սփռել պատմահնագիտական իրողութիւնների վրայ»,- ներկայացրեց արշաւախմբի համաղեկավար Ռենէ Կունցեն:

Պեղումներին զուգահեռ արշաւախումբը կազմակերպել է նաեւ միջազգային ամառային դպրոց հնագէտ ասպիրանտների համար, որին մասնակցել են ուսանողներ ոչ միայն Հայաստանից, այլ նաեւ Վրաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Գանատայից, Գերմանիայից: «Ամառային դպրոցը լաւ հնարաւորութիւն է փորձի փոխանակման եւ հետագայ համագործակցութեան հեռանկարներ զարգացնելու համար»,- եզրափակեց հնագէտ Մարիամ Ամիրեանը:

Մատենադարանի Մասնագէտները Կը Վերականգնեն Ամերիկայի Հայկական Թանգարանի Ձեռագրերը

Մատենադարանի մասնագէտները սկսած են Ամերիկայի հայկական Թանգարանի 21 ձեռագրերու վերականգնումը:

Մաշտոցեան Մատենադարանի եւ Ուոթըրթաունի Ամերիկայի Հայկական Թանգարանի (ԱՀԹ) համագործակցութիւնը սկսած է 2022 թուականէն՝ ձեռագրերու ընդարձակ նկարագրութեամբ, որ իրականացուցած է Մատենադարանի գիտաշխատող, այժմ գլխաւոր աւանդապահի պարտականութիւնները կատարող Դաւիթ Ղազարեանը: ԱՀԹ-ն ԱՄՆ-ի մէջ հայ արուեստի նմուշներ ունեցող ամենամեծ հաստատութիւնն է:

Այս համագործակցութիւնը աւելի ընդարձակուած է շնորհիւ Bank of America-ի՝ 2023 թուականի դրամաշնորհային ծրագրին, որ յատկացուած է ԱՀԹ-ի հաւաքածուի 21 ձեռագրերու նորոգման համար (BofA-ն դրամաշնորհ կը տրամադրէ մշակութային կեդրոններուն՝ արուեստի կարեւոր նմուշներուի պահպանման համար): Այժմ Մատենադարանի Վերականգնման Բաժնի վարիչ Գայիանէ Էլիազեանը, աւագ վերականգնող Սուսաննա Բարսեղեանը եւ գլխաւոր աւանդապահի պարտականութիւնները կատարող Դաւիթ Ղազարեանը կը գտնուին Ուոթըրթաուն, ուր սկսած են ձեռագրերու նորոգման աշխատանքները:



Մատենադարանի աշխատակիցները այցի առաջին օրը հանդիպած են Թանգարանի տնօրէն Ճէյսըն Սոհիկ եանի հետ, զրուցած են աշխատանքի ընթացակարգին մասին, շրջայց կատարած են ցուցասրահներով: Բուն աշխատանքը արդէն մեկնարկած է. ձեռագրերու ախտահանում, ամբողջականութեան ստուգում եւ վերականգնում:

Համակարգումի Պակասը

Շարունակուած էջ 11-էն

Պէտք է ընդունինք բոլորս ալ որ մեր ներկայ տկարութեանց վէրքերուն եւ ընկրկումներուն մէկ կարեւոր մասը հետեւանքներ են մեր գործած սխալներուն, մեր եսասիրութեան, անհատապաշտական հակումներուն, նախանձին եւ մեղքերուն:

Եթէ ազգային մտահոգութիւններու թելադրանքով շարժէինք, եթէ մեկնակէտ ունենայինք ազգային մտածողութեան պահանջներն ու ստիպողութիւնները, եթէ ընդհանրական հայութեան համազգային շահերէն առաջնորդուէինք, այն ատեն անյապաղ պիտի ձերբազատուէինք մեր հաւաքական կեանքին մէջ դերակատարութիւն ունեցող ախտերէն:

Արտասահմանի հայութեան մթագնող ապագայ հորիզոնին ի տես եւ մեր ազգապահպանման աճող դժուարութեանց դիմաց՝ պարտաւոր ենք ըլլալ զգաստ ու խոհեմ, եւ անոր համընթաց՝ լարել մեր ուժականութիւնը, որպէս զի կարենանք անկեղծ եւ անվերապահ գործակցութեան եւ ժողովրդային բաղձանքը կենդանի գործի եւ շօշափելի փաստի վերածելու:

Գործակցութեան եւ համայնական ընդհանուր ներդաշնակութեան դէմ որեւէ անհարթելի արգելք պէտք չէ ըլլայ: Մեր հոգեւոր եւ աշխարհական առաջնորդութիւնը պէտք է լծուի գործնական քայլերու՝ ազգային ընդհանուր վարքագիծով մը վարելու համար համայնական մեր կեանքը:

www.massisweekly.com

Մեկնարկեց «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցի Նոր Ուսումնական Տարին

Ժամանակակից աշխարհում մարդու կարեւորագոյն եւ մշտական կապիտալը եղել եւ մնում է գիտելիքը: Վերջինիս կարեւորութեան գիտակցումն այսօր անվիճելիօրէն առկայ է ողջ հասարակութեան, յատկապէս հայ իրականութեան մէջ՝ լինի դա հայրենիքում, թէ նրա սահմաններից դուրս:

ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեաց մայր տաճարի հովանու ներքոյ գործող «Փոքրիկ հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն արդէն 23 տարի պատուով ստանձնում է այդ պատասխանատու եւ նուիրական դերը եւ շարունակում է խորը սերմեր գցել սփիւռքում ապրող հայ երեխաների մէջ:

Օգոստոսի 19-ին կրթօճախն իր դռները բացեց հայ մանուկների եւ պատանիների առջեւ՝ աւետելով 2023-2024 ուս. տարուայ մեկնարկը: Տօնական օրը յատկապէս առանձնայատուկ էր նրանց համար, ովքեր առաջին անգամ են ոտք դնում շաբաթօրեայ դպրոց՝ կրթուելու եւ դաստիարակուելու հայրենասէր, ազգային ու քրիստոնէական ոգով:

Ներկաներին իր շնորհաւորական խօսքով դիմեց ԱՄՆ Արեւմտեան թեմի Շաբաթօրեայ վարժարանների հոգեւոր տեսուչ եւ դպրոցի տնօրէն բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանը՝ մաղթելով օրհնեալ ուսումնական տարի եւ բարգաւաճ արդիւնքներ: Նա նշեց, որ նոր ուսումնական տարուայ մեկնարկով կրթութեան ոլորտի բոլոր պատասխանատուների հետ սկսում է աշխատանքային առաւել պատասխանատու շրջան, որի ընթացքում ուսուցիչների, աշակերտների եւ նրանց ծնողների ջանքերը ուղղուելու են մէկ կարեւոր նպատակի՝ հայրենիքից դուրս կրթել եւ հայեցի դաստիարակել գիտելիքներով հարուստ, առողջ եւ արժանապատիւ սերունդ: Յովհաննէս սարկաւագը յորդորեց նաեւ, որ երեխաները սիրեն ուսումը, լինեն ուշիմ ու ջանադիր եւ ոչ մի դէպքում չթերանան իրենց պարտականութիւններում, քանի որ միայն ուսեալ եւ կիրթ հասարակութիւնն է ընդունակ կատարել մեծ բարեփոխումներ:

Յանուն ԱՄՆ Արեւմտեան թեմի բարեջան առաջնորդ, գերաշնորհ Տ. Յովնան արք. Տէրտէրեանի օրհնութեան խօսք փոխանցեց հոգեշնորհ Տ. Երեմիա վարդապետ Աբգարեանը: Հայր սուրբը մաղթեց բարձր առաջադիմութիւն, իսկ ուսուցիչներին, ում վստահուած է սփիւռքում ապրող սերունդների կրթութեան եւ դաստիարակութեան դժուարին գործը, յաջողութիւններ իրենց շնորհակալ աշխատանքում: Այնուհետեւ յաջորդեց աւանդական Տէրունական աղօթքը, ապա բարեշնորհ Յովհաննէս սարկաւագ Գումրույեանը իր մասնաւոր շնորհակալութիւնը յայտնեց Արեւմտեան թեմի շաբաթօրեայ դպրոցների գիտակրթական յանձնախմբի ատանեպետ դոկտոր Էլլի Անդրէասեանին իր մշտական ներկայութեան եւ բազմամեայ անշահախնդիր ծառայութեան համար:

Տօնական խանդավառ տրամադրութեամբ դպրոցականներն անցան դասարաններ՝ նոր գիտելիքներով զինուելու եւ Օշականից ճառագող հրաշքն ապրեցնելու, յաւերժ կենդանի պահելու հաստատակամութեամբ:

Շնորհաւոր նոր ուսումնական տարի:

ՍԵՐԻՆԷ ԱՐԱՄԵԱՆ
Ուսուցչուհի

Շաբաթաթերթ
ՆԱՅՈՒՐԻ
Աշխատիր - Գրատիպ
ՇԱԽՈՒ Է
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ-ի
1958 - 1975 թուականներու
Լրիւ Լաթակազմ Հաւաքածոները
Յանկացողներէն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւին
626-354-5924

Սպանիան Առաջին Անգամ Նուաճեց Կանանց Աշխարհի Բաժակը

Ֆութպոլի կանանց Սպանիոյ հաւաքականը նուաճեց աշխարհի ախոյեանի տիտղոսը՝ նուազագոյն արդիւնքով պարտութեան մատնելով Անգլիոյ հաւաքականին:

Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ տեղի ունեցած եզրափակիչին սպանացիները առաւելութեան հասան Մատրիտի «Ռեալի» պաշտպան Օլկա Քարմոնայի նշանակած կոլին շնորհիւ:

Սպանիան առաջին անգամ նուաճեց Աշխարհի Բաժակը: Երկու խումբերն ալ առաջին անգամ է որ հասած էին աշխարհի առաջնութեան եզրափակիչ:

«Ռեալի» Յաջորդական Երկրորդ Յաղթանակը

Սպանիոյի առաջնութեան երկրորդ հանգրուանին փոխախոյեան Մատրիտի «Ռեալը» հիւրընկալեց «Ալմերիային»: Իտալացի Կառլո Անչելոտիի գլխաւորած խումբը յաղթանակի տարաւ 3:1 արդիւնքով:

Երրորդ վայրկեանին ետ մնալէ ետք Արքայական խումբը առաւելութեան հասաւ անգլիացի կիսապաշտպան Ճուտ Պելինկեմի երկու կոլերուն եւ պրազիլցի յարձակող Վինիսիուս Ժունիորի կոլի շնորհիւ:

«Ռեալը» 6 կէտով առաջատարն է:

Պետրիի եւ Թորեսի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Պարսելոնային»

Սպանիոյի առաջնութեան երկրորդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Կատիսին»: Սպանացի Զաւիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով:

82-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ 20-ամեայ սպանացի կիսապաշտպան Պետրին:

Աւելացուած ժամանակին աչքի ինկաւ 23-ամեայ սպանացի յարձակող Ֆերան Թորեսը: Կոլային փոխանցումը կատարեց 34-ամեայ լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկին:

«Պարսելոնան» 4 կէտով չորրորդն է, «Կատիսը» 11-րդն է՝ 3 կէտ:

«Թոթենհեմը» Յաղթեց «Մանչեսթըր Եունայթըտին»

Անգլիոյ առաջնութեան երկրորդ հանգրուանին «Թոթենհեմը» Լոնտոնի մէջ ընդունեց «Մանչեսթըր Եունայթըտին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով

«Թոթենհեմ» 4 կէտով չորրորդ տեղը կը գրաւէ, «Մանչեսթըր Եունայթըտը» 10-րդն է՝ 3 կէտ:

«Լիվերփուլի»Յաղթանակը

Ֆութպոլի Անգլիոյի Փրեմիեր Լիկայի առաջնութեան երկրորդ հանգրուանին «Լիվերփուլ» ընդունեց «Պորնմուտին» եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով:

«Լիվերփուլ» 4 կէտով երրորդն է: Նոյնքան կէտ ունի երկրորդ տեղը գտնուող «Պրենթֆորտը», որ 3:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Ֆուլհեմին»:

«Քյոլնը» Պարտուեցաւ Տորդմունտի «Պորուսիային», Ադամեանը Մասնակցեցաւ Խաղին

Գերմանիոյ առաջնութեան առաջին հանգրուանին Տորդմունտի «Պորուսիան» սեփական խաղադաշտին վրայ մրցեցաւ «Քիոլնի» հետ եւ յաղթեց 1:0 արդիւնքով:

88-րդ վայրկեանին կոլի հեղինակ դարձաւ հոլանտացի յարձակող Տոնիել Մալենը:

«Քյոլնի» պահեստայիններու մէջ էր Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը, որ դաշտ մտաւ 52-րդ վայրկեանին:

Սուրէն Աղաջանեանը՝ Երիտասարդներու Աշխարհի Ախոյեան

Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ կատարուող յունա-հռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի երիտասարդական առաջ-նութեան Սուրէն Աղաջանեանը գեղեցիկ յաղթանակով նուաճեց ախոյեանի տիտղոսը:

60 քգ. ծանրութեան եզրափակիչին երիտասարդներու աշխարհի եւ Եւրոպայի փոխախոյեանը մրցեցաւ Հնդկաստանի ներկայացուցիչ Սումիթ Սումիթի հետ եւ դիտարժան պայքարին 13:4 արդիւնքով տպաւորիչ յաղթանակ արձանագրեց:

Հայաստանի երիտասարդական հաւաքականէն պրոնզէ մետալակիր դարձած է 2022 թուականի երիտասարդներու աշխարհի ախոյեան Վիգէն Նազարեանը:

Արսէն Զախարեանը Միացաւ «Ռեալ Սոսիեթատին»

Ռուսաստանի հաւաքականի կիսապաշտպան Արսէն Զախարեանը Մոսկուայի «Տինամոյէն» տեղա-փոխուեցաւ «Ռեալ Սոսիեթատ», կը հաղորդէ սպանական ակումբի մամուլի ծառայութիւնը: 20-ամեայ ֆութ-պոլիստը կնքած է 6 տարուայ պայմանագիր:

«Տինամոն» Զախարեանի տեղափո-խումէն կը ստանայ 12 միլիոն եւրօ:

Այս մրցաշրջանին Զախարեանը «Տինամոյի» հեաւնակցած է 5 հանդիպման, նշանակած է 2 կոլ, կատարած 1 կոլային փոխանցում:

Մեսի. Յոյս Ունիմ, Որ Այս Միայն Սկիզբն է

Աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին ընկերային ցանցերուն մէջ կատարած գրառումով մեկնա-բանած է ամերիկեան «Ինթեր Մայամի»ի նուաճած առաջին տիտղոսը: ԱՄՆ-ի եւ Մեքսիքոյի Լիկաներու գաւաթի խաղարկութեան եզրա-փակիչին «Ինթեր Մայամին» յետխաղային 11-մեթրանոցներով յաղթած էր «Նեշվիլին»: Հիմնական ժամանակը աւարտած էր 1:1 արդիւնքով: «Ինտեր Մայամիի» կոլը խփած էր Մեսին:

«Շատ ուրախ եմ որ նուաճած եմ առաջին տիտղոսը ակումբի պատմութեան մէջ: Իւրաքանչիւր խաղցողի յամառ աշխատանքը եւ նուիրուածութիւնը հնարաւոր դարձուցին այս նուաճումը: Յոյս ունիմ, որ այս միայն սկիզբն է: Առա՛ջ, «Ինթեր Մայամի»»,- գրած է Մեսին:

Հենրիխ Մխիթարեան. Մենք Ուժեղ Ենք Եւ Կ՝ապացուցենք Խաղադաշտին Վրայ

Իտալիոյի գաւաթակիր եւ սուփերգաւաթակիր Միլանի «Ինթերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը մեկնաբանած է յաղթանակը Իտալիոյ առաջնութեան մեկնարկային հանգրուանին:

Իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխաւորած խումբը աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի յարձակող Լաուտարօ Մարտինեսի երկու կոլերուն շնորհիւ 2:0 արդիւնքով պարտութեան մատնած է «Մոնցային»: Մխիթարեանը մեկնարկային կազմին մասնակցած էր ամբողջ հանդիպմանը:

«Ես միշտ եղած եմ կիսապաշտպան, բայց կարող եմ խաղալ նաեւ յարձակման գիծին վրայ կամ երկրորդ յարձակողի դիրքին՝ ինչպէս կ՝որոշէ մարզիչը:

«Մենք դեռ մեծ ցանկութիւն ունինք դարձեալ խաղալ Ախոյեաններու լիկայի մէջ եւ մենք կը ձգտինք նաեւ նուաճած է երկրորդ աստղը: Մենք ուժեղ ենք եւ կ՝

Աշխարհի Գաւաթ. Մակնուս Կարլսենը Հասաւ Եզրափակիչ

Ճատրակի 16-րդ ախոյեան, համաշխարհային դասակարգման առաջատար Մակնուս Կարլսենը հասաւ աշխարհի գաւաթի խաղարկութեան եզրափակիչ:

Եզրափակիչին Կարլսենի մրցակիցը պիտի ըլլայ ամերիկացի Ֆապիանօ Կարուանայի եւ հնդիկ Ռամեշբաբու Պրագնանադհայի դիմակայութեան յաղթողը:

Մակնուս Կարլսենը առաջին անգամ հասաւ աշխարհի գաւաթի եզրափակիչ:

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL
ARMENIAN INDEPENDENCE DAY Festival
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ
ՓՈՌՍՕԼ
SUNDAY, SEPTEMBER 17, 2023
STARTING AT 11:00AM
VERDUGO PARK / GLENDALE
1621 CANADA BLVD, GLENDALE, CA 91208
ORGANIZED BY
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION
GENERAL SPONSOR
SAHARA
MIDDLE EASTERN CUISINE
2226 E. Colorado Blvd.
Pasadena, CA 91107
626.795.6900
www.saharapasadena.com
AURORA
BANQUET HALL
SPONSORS
LILIT BAKERY
CAFE
Kathryn BARGER
5th District Supervisor • County of Los Angeles
Vrej Pastry
UMPQUA
B·A·N·K
ARMENIAN FOOD
FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ
KIDS GAMES
LIVE MUSIC
ART EXHIBITION
To reserve your vendor booth, please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար, հեռաձայնեցէք՝ Նոր Սերունդ Միութիւն
(818) 391-7938